AZG NEW PDF.qxd 2/11/2010 11:33 PM Page 1

Ազգ Azg

12 ՓԵՏՐՈՒԱՐ 2010 ՈՒՐԲԱԹ 24(4405)

ISSN: 1829-1651

# ԱՊՀ անվտանգության պահպանումը վերաբերում է բոլոր անդամ երկրներին

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը Պետդումայի վավերացմանն է ներկայացրել ԱՊՀ-ում խաղաղության պահպանման համար հավաքական ուժերի գործունեության եւ անձնակազմի ֆինանսական, տեխնիկական եւ թիկունքային ապահովմանը վերաբերող համաձայնագիրը: Ըստ այդ համաձայնագրի՝ վերոհիշյալ ուժերը պետք է ֆինանսավորվեն այն երկրներից, որոնք իրենց զորամիավորումները ներգրավելու են այդ ուժերի կազմում: Այդ ֆինանսավորումը արտացոլված է լինելու նշված երկրների պետական բյուջեներում: Համաձայնագրում նշված է նաեւ, որ ուժերին ֆինանսավորելու համար կարող են օգտագործվել նաեւ ԱՊՀ անդամ այլ երկրներից, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններից եկող միջոցները:

Հ. Ա.

# Հայ-բրիտանական հարաբերությունների խորացման ցանկությամբ



Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն կատարած աշխատանքային այցի շրջանակում Բուքինգհեմյան պալատում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին ընդունել է Նորին Մեծություն թագուհի Եղիսաբեթ Երկրորդը: Պաշտոնական տեղեկատվության համաձայն, զրույցի ընթացքում քննարկվել են հայ-բրիտանական երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարներին, Հայաստանի եվրոինտեգրման գործընթացին, ինչպես նաեւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը վերաբերող խնդիրներ:

Այնուհետեւ Սերժ Սարգսյանը լոնդոնյան իր կեցավայրում ընդունել է Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Դեյվիդ Միլիբենդին: Հանդիպմանը քննարկվել են հայ-բրիտանական հարաբերություններին եւ տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող հարցեր: Սերժ Սարգսյանը նշել է, որ մեր երկիրը մեծ կարեւորություն է տալիս Միացյալ Թագավորության հետ քաղաքական երկխոսության հետագա խորացմանն ու առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը, շահագրգիռ է տարբեր ուղղություններով գործակցության ընդլայնման հարցում: Վստահություն է հայտնվել, որ Եվրոմիության Արեւելյան գործընկերության նախաձեռնությունը հնարավորությունների լայն շրջանակ է բացում երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով համագործակցության զարգացման համար:

Տես էջ 2

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ

# Ծաղկում է միայն ուղեղների «արտահանումը»

ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՀ ԱԺ պատգամավոր,
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ



**Երկրի տնտեսական անվտանգությունը ազգային անվտանգության կարեւորագույն բաղադրիչներից է: Հայաստանի տիպի պետության համար, երբ առկա են ռեսուրսների սահմանափակ հնարավորություններ, առաջնային խնդիր է դառնում արտադրության գործոնների (մարդ, հող, կապիտալ եւ ձեռնարկատիրական կարողություն) ճիշտ կառավարման միջոցով արտադրողականության բարձր մակարդակի ապահովումը տնտեսության բոլոր ճյուղերում:**

**Հայաստանի տնտեսական զարգացման այլ տարբերակ չկա, քան ներմուծման փոխարինումը եւ արտահանմանն ուղղված քաղաքականությունը: Ցավոք, մեզանում դեռեւս հակառակ միտումներն են: Նախորդ տարվա պաշտոնական տվյալներով ներմուծումը գերազանցում է արտահանմանը մոտ 5 անգամ: Պարադոքսն այն է, որ մեզանում հակառակ պատկերն է միայն ուղեղների արտահանման գծով: Անկում է գրանցված արդյունաբերական արտադրանքի ոլորտում: Իսկ դա նշանակում է, որ մենք առավելապես սպառողական, այլ ոչ թե արտադրող տնտեսական համակարգ ունենք: Եթե այս վիճակը պահպանվի, ապա մի քանի տարի անց Հայաստանը կարող է ամբողջությամբ վերածվել «բանանային երկրի», որը գոյատեւում է միայն դրսի վարկերի, գրանտների, հումանիտար օգնությունների, ազգականների ու բարեկամների օգնությունների եւ սփյուռքահայերի միանգամյա կարոտախսային այցելությունների հաշվին:**

**Կարծում եմ, որ նման հեռանկարի որեւէ բանական մարդ չի կարող համակերպվել: Հետեւաբար, օրակարգային հարց է դառնում ՀՀ տնտեսական համակարգի վերակառուցումը, ինչպես նաեւ պետական այնպիսի քաղաքականության մշակումը, որը Հայաստանը կդարձնի արտադրող եւ արտահանող պետություն:**

Տես էջ 3

# Եվրոմիությանն անդամակցելու Թուրքիայի ճանապարհը «անցնում է» Կիպրոսով

Եվրախորհուրդը պահանջել է Անկարայից՝ անհապաղ հանել զորքերը Կիպրոսի տարածքից: Բացի այդ, Եվրախորհուրդը պահանջել է նաեւ «շտապ եւ հաջող վերջաբանով» ավարտել Կիպրոսի հարցով բանակցությունները: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի տեղեկացմամբ, եվրոպացիները Թուրքիայից պահանջում են «ընդունելի կլիմա» ստեղծել Կիպրոսի շուրջը՝ կատարելով Եվրոմիությանն անդամակցելու սեփական պարտականությունները. ապահովել կիպրական Ֆամագուստա քաղաքի անմարդաբնակ մասի բնակեցումը՝ վերադարձնելով այն իր իրական տերերին, համաձայն ՄԱԿ-ի 1984-ին ընդունած 550 բանաձեւի:

Եվրախորհուրդը հիշեցրել է Թուրքիային նաեւ, որ նա արդեն չորրորդ անգամ հրաժարվում է պահպանել Եվրոմիության հետ մաքսային միության վերաբերյալ համաձայնագիրը, համաձայն որի Անկարան պարտավոր է բացել իր բոլոր նավահանգիստներն ու օդանավակայանները Եվրոմիության բոլոր երկրների առջեւ, այդ թվում նաեւ միության անդամ Կիպրոսի Հանրապետության:

Եվրոպացիները նշել են, որ Թուրքիայի կողմից պարտականությունների չկատարումը կբերի «լուրջ հետեւանքների Թուրքիայի՝ դեպի Եվրոպա ճանապարհին»: Եվրոմիությունում նախագահող Իսպանիայի արտգործնախարարը հայտարարել. «Եթե այս հարցերում թուրքական կողմից առաջընթաց չլինի, ապա Անկարայի համար չեն բացվի Եվրոմիությանն անդամակցելու նոր բանակցային դռներ»:

Փաստորեն կարելի է արձանագրել, որ Թուրքիայից քայլեր սպասում են շատերը, ավելին՝ «մեծ դիվանագետի» համբավ ունեցող Անկարան հայտնվել է բազմակողմանի ճնշումների մեջ:

Հ. ԱՓՅԱՆ

# Եկեք բոլորս կատարենք մեր պարտականությունները

*Կոչ է անում Դավութօղլուն տարածաշրջանի երկրներին*

**«Անկարան ունի բավարար քաղաքական կամք Կովկասում խաղաղություն եւ կայունություն ապահովելու համար», հայտարարել է Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն Ղազախստան ուղեւորվելու ճանապարհին (հիշեցնենք՝ այդ երկիրն է ստանձնել ԵԱՀԿ-ում նախագահությունը-Հ.Ա.): Կոնկրետ հայ-թուրքական գործընթացների հետ կապված Դավութօղլուն ընդգծել է, թե «մոտ ապագայում սպասվում են լուրջ քայլեր այդ ուղղությամբ»: Միջազգային հանրությունը, թուրք բարձաստիճան դիվանագետի խոսքերով, շարունակում է օժանդակել այս գործընթացին. «Ուստի մենք կոչ ենք անում տարածաշրջանի երկրներին եւ բոլոր նրանց, ովքեր շահագրգռված են խաղաղության եւ կայունության ստեղծմամբ տարածաշրջանում՝ եկեք բոլորս կատարենք մեր պարտականությունները: Կրկնում եմ՝ Թուրքիան դրա համար ունի բավարար քաղաքական կամք», շեշտել է Դավութօղլուն: Սակայն Դավութօղլուի ասած «Թուրքիայի բավարար քաղաքական կամքը»՝ առանց նախապայմանների վավերացնել հայ-թուրքական Արձանագրությունները եւ դրանցում չտեսնել այլ երկրների շահեր, այնքան էլ տեսանելի չէ՝ համենայն դեպս առայժմ:**

Հ. Ա.

# Փոփոխություններ միջազգային պայմանագրերի օրենքում՝ որպես ապահովական տարբերակ

**Հայաստանի կառավարությունը երեկ հավանություն տվեց օրենքի այն նախագծին, որով լրացում է կատարվում ՀՀ միջազգային պայմանագրերի մասին օրենքում: Ըստ նախագծի՝ միջազգային պայմանագիր ստորագրող կողմը մինչեւ ստորագրված պայմանագրի ուժի մեջ մտնելը, իրավունք ունի այդ պայմանագրի մասնակիցը չդառնալու՝ զանազան խանգարիչ հանգամանքների երեւան գալու դեպքում, այդ մտադրության մասին հստակ հայտնելով: Սա փաստորեն ապահովական տարբերակ է այն դեպքում, եթե թուրքերը զզվեցնեն իրենց նախապայմաններով կամ ձգձգեն արձանագրությունների վավերացումը, այս լրացման պարագայում Հայաստանը հնարավորություն կունենա ընդհատելու գործընթացը: Ավելի վաղ նախագահ Սարգսյանն էր հանձնարարել համապատասխան կառույցներին՝ մշակել միջազգային պայմանագրերից հրաժարվելու, դրանք չեղյալ հայտարարելու, ստորագրությունը հետ կանչելու նախագիծ եւ ներկայացնել Ազգային ժողով:**

Մ. Խ.

# Հայրը սպանեց 21-ամյա դստերը

**Փետրվարի 10-ին ոստիկանության Մարտունու բաժնում տեղեկություններ են ստացվել, որ Երանոս գյուղի բնակչուհի, 21-ամյա Մանուշակ Խաչատրյանը տանը մահացել է: Մահը եղել է բռնի, ու նրան հաջորդ օրը շտապ հուղարկավորել են:**

**ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության եւ Մարտունու բաժնի աշխատակիցների հետախուզական աշխատանքների շնորհիվ պարզվել է, որ 56 տարեկան Անդրանիկ Խաչատրյանը մեկ օր առաջ վիճաբանել է դստեր՝ 21-ամյա Մանուշակ Խաչատրյանի եւ կնոջ՝ Նուբար Փաշոյանի հետ, որի ընթացքում փայտով հարվածել է նրանց գլխին: Ստացած վնասվածքներից որոշ ժամանակ անց դուստրը անասնագոմում մահացել է: Բերման ենթարկված Անդրանիկ Խաչատրյանը խոստովանական ցուցմունք է տվել: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ: Ա. Խաչատրյանը ձերբակալված է:**

Մ. Մ.

# Աբդուլլահ Գյուլն ընդունեց Սերժ Սարգսյանի դատողությունները

Աբդուլլահ Գյուլը երեկ պատասխանել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձին: Թուրքիայի նախագահի պաշտոնական կայքում տեղադրված ուղերձի համաձայն՝ ողջունելով նախագահին եւ հայ ժողովրդին, նա գոհունակությամբ է ընդունում Սերժ Սարգսյանի ուղերձում արված դատողությունները:

«Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորմանն ուղղված երկկողմ ջանքերը հակամարտություններով առկա մեր տարածաշրջանում նոր խաղաղության հույս են ծնել, որին աշխարհը իրապես տեղին հետաքրքրությամբ է հետեւում: Ես ընդունում եմ այդ տեսակետը: Անհրաժեշտ է մեր ժողովուրդների միջեւ երկար ժամանակ՝ առկա նախապաշարմունքները հաղթահարելու եւ փոխադարձ ըմբռնումը եւ վստահությունը վերականգնելու համար: Սրանք մեր երկրների հարաբերությունների կարգավորման գործընթացին աջակցող գլխավոր գործոններն են: Անհրաժեշտ է, որ չկասկածենք մեր վճռականությանը այս գործընթացում, քանի դեռ առկա է փոխադարձ համաձայնություն՝ ձգտելու կարգավորել հարաբերությունները»:

Գյուլը համաձայն է նախագահ Սարգսյանի այն մտքին, որ պատասխանատու ղեկավարությունը պետք է կանգնի իր խոսքի հետեւում եւ աջակցի այդ խոսքերի իրականացմանը: «Հարգելով դա, շարունակելու ենք ավելի առաջ տանել մեր երկրների միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացում ձեռք բերված փոխհամաձայնությունը: Պետք է հասկանանք, որ պատմական նշանակություն ունեցող այս գործընթացի արդյունքները կախված են երկկողմ պարտավորությունների կատարումից եւ բավարար քաղաքական խիզախությունից»:

Թուրքիայի նախագահը նշել է, որ տարածաշրջանում ապրող բոլոր ժողովուրդների համար շարունակական խաղաղության, անվտանգության բարգավաճման եւ համագործակցության ապահովումը պետք է կազմի երկու երկրների նախագահների ապագայի համատեղ նպատակը: Նա նշել է, որ շարունակելու է անձամբ զբաղվել առկա գործընթացով՝ հույս ունենալով, որ մեր երկրների համար գործընթացը կհասնի համոզիչ արդյունքի:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Կոռուպցիայի դեմ պայքարում օրենսդրական նորը՝ ճնշման լծակ

Հայաստանում կոռուպցիոն ռիսկերը պայմանավորված չեն միայն սուբյեկտիվ իրողություններով, այլ երբեմն այդօրինակ ռիսկեր են առաջանում հենց օրենսդրական նորմերի «շնորհիվ»:

«Դուրս մղենք կոռուպցիան մեր կյանքից» ծրագրի շրջանակներում, որ իրականացվում է Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիայի կողմից՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի աջակցությամբ, կլոր սեղան-քննարկում էր՝ իրավաբան-փորձագետ Արա Զոհրաբյանի եւ ծրագրի իրականացնող ասոցիացիայի փոխնախագահ Արման Սաղաթելյանի մասնակցությամբ:

**Արա Զոհրաբյանն** իր փաստաբանական պրակտիկայից երեկ ներկայացրեց, որ կոռուպցիայի դեմ պայքարը երբեմն հակառակ ազդեցությունն է ունենում: Մասնավորապես, դատավարություններում դատախազներն առավելագույն պատիժ են պահանջում մեղադրանքը պաշտպանելիս այն մտավախությամբ, որ չմեղադրվեն կաշառակերության մեջ, իսկ դատավորներն էլ, իրենց հերթին, խուսափում են մեղմել պատժամիջոցը, որպեսզի չմեղադրվեն կաշառված լինելու մեջ:

Մամուլում վերջերս լայնորեն ներկայացվել են «Կարախանյան եւ ընկերներ» իրավաբանական գրասենյակի՝ Պետեկամուտների կոմիտեի դեմ ներկայացված դատական հայցն ու դրա պատմությունը, որին երեկ անդրադարձան նաեւ կլոր սեղանի մասնակիցները:

Հիշեցնենք, որ Պետական եկամուտների կոմիտեն 2009 թ. սեպտեմբերին ստուգումներով արձանագրություն էր կազմել, եւ «Կարախանյան եւ ընկերներ»-ի գույքն ու միջոցները պետությունից հարկեր թաքցնելու մեղադրանքով դրվել էին արգելանքի տակ: Չանդրադառնալով խնդրի այլ մանրամասների, նշենք, որ **Արա Զոհրաբյանի** ներկայացմամբ, արդեն իսկ այն հանգամանքը, որ արգելանք է կիրառվում, յուրօրինակ հնարավորություններ տվող օրենսդրական նորմ է, հնարավորություններ՝ ճնշելու կազմակերպությանը, վնաս պատճառելու:

Խնդիրն այն է, որ արգելանքը համապատասխան վճիռ չկայացվելու դեպքում ինքնաբերաբար հանվում է երեսուն օրվա ընթացքում, մինչդեռ փաստաբան Զոհրաբյանն ընդգծեց, որ դատավարական ժամանակացույցի ներկա պայմաններում դա հնարավոր չէ: Այսինքն ստացվում է, որ որեւէ կազմակերպության գույքի ու միջոցների վրա արգելանք դնելը ժամանակավոր բնույթ է կրում ու դառնում ճնշման լծակ, նկատենք, օրինական:

Այսուհետեւ ներկաներն արծարծեցին ընդհանրապես կոռուպցիայի գաղափարն ու դրա դեմ պայքարի արդյունավետության խնդիրը: Ըստ այդմ, փորձագետ Զոհրաբյանը ներկայացրեց, որ կոռուպցիայի դեմ պայքարն անիմաստ է հետեւանքների առումով, եթե չեն բացահայտվում պատճառներն ու դառնում պայքարի հիմնական թիրախ: Զոհրաբյանի խոսքերով, այս առնչությամբ առաջնային են դառնում մի շարք հարցեր, մասնավորապես, կադրերի կոմպետենտության, աշխատավարձի չափի, պատասխանատվության ու պատժելիության եւ այլն:

Փորձագետը նշեց, որ չնայած դատավորների աշխատավարձերը բարձրացվել են վերջին ժամանակներս, դրական տեղաշարժ կոռուպցիոն ռիսկերի նվազման առումով նկատելի էր մինչեւ 2008 թ. մարտի մեկի իրադարձությունները: Ներկա դրությամբ իրավիճակը դատական համակարգում անկախության առումով կարծես որոշ դադարի վիճակում է, որ միտում է դրսեւորում դրական զարգացում ունենալու:

Եվ, այնուամենայնիվ, փորձագետը մտահոգություն հայտնեց, որ կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցությունը, ինչպես արդեն նշել ենք, կարող է հակառակն էլ լինել, նկատի ունենք վնասը հատկապես քրեական գործերի քննության պարագայում, որոնցում մեղավորության սկզբունքով են առաջնորդվում ինչպես դատախազը, այնպես էլ դատավորը՝ կաշառված լինելու մեղադրանքից իրենց ազատելու մտավախությամբ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ

# Հանդիպում Արմենական-ՌԱԿ գրասենյակում



**Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցության երիտասարդական թեւի մի խումբ ներկայացուցիչներ հանդիպեցին Ռամկավար Ազատական կուսակցության Համաշխարհային խորհրդի գործադիր մարմնի մամլո դիվանի պատասխանատու Հակոբ Վարդիվառյանի հետ (Նյու Յորք): Հակոբ Վարդիվառյանը երիտասարդ կուսակցական ընկերներին պատմեց իր քաղաքական եւ տնտեսական գործունեության մասին, շեշտելով որ ԱՄՆ-ի պես հարուստ երկրում, երբ դրամն ու նյութականն են կարեւորվում, միայն կուսակցական եւ ազգային գործունեությունն է հային հայ պահում: Կուսակցական փորձառու ընկերը երիտասարդներին խորհուրդ տվեց ազգային ակտիվ գործունեություն ծավալել՝ խոստանալով օժանդակել նրանց գործունեությանը եւ ձեռնարկումներին:**

# Հայկական ուսումնասիրությունների ընկերության հայտարարությունը

**Հայկական ուսումնասիրությունների ընկերությունը հիմնվել է 1974-ին Կալիֆոռնիա, Կոլումբիա եւ Հարվարդ համալսարանների մի շարք գիտնականների կողմից, Ռիչարդ Հովհաննիսյանի, Տիգրան Գույումճյանի, Նինա Գարսոյանի, Ավետիս Սանջյանի եւ Ռոբերտ Թոմսոնի նախաձեռնությամբ: Նպատակն է զարգացնել հայկական ուսումնասիրությունները որպես ակադեմիական առարկաներ: Փետրվարի 8-ին ընկերությունը հրապարակել է իր մամուլի հաղորդագրությունը՝ կապված հայ-թուրքական Արձանագրություններում առկա պատմական ենթահանձնախմբերի հետ: Հաղորդագրությունում մասնավորապես ասվում է. «Հայոց ցեղասպանությունը անհերքելի փաստ է՝ հաստատված ոչ զգացմունքային, մանրակրկիտ ձեւով մշակված, բազմալեզու արխիվային նյութերի գոյությամբ, որոնք կատարվել են ճանաչված հեղինակավոր կառույցների, այդ թվում՝ Ցեղասպանության միջազգային ասոցիացիայի եւ մեր Հայկական ուսումնասիրությունների ընկերության հարգարժան գիտնականների կողմից: Հայկական ցեղասպանության ստույգությունը չի կարող եւ չպետք է դառնա քննարկման կամ քաղաքական առուծախի նյութ»:**

# Ղարաբաղի ներկայացուցիչները հրավիրվել են Աբխազիա

«Գոլոս Ռոսսիի» ռադիոկայանի տեղեկացմամբ՝ այսօր կայանալիք Աբխազիայի ընտրված նախագահ Սերգեյ Բաղապշի երդման արարողությանը հրավիրված են ավելի քան 120 մարդ: Նրանց թվում են Ռուսաստանի, Մերձդնեստրի, Հարավային Օսիայի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, ինչպես նաեւ Աբխազիայի անկախությունը ճանաչած՝ Նիկարագուայի եւ Վենեսուելայի ներկայացուցիչներ:

# Հայ-բրիտանական հարաբերությունների խորացման ցանկությամբ

*1-ին էջից*

Դեյվիդ Միլիբենդը ողջունել է Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանն ուղղված Հայաստանի նախագահի ջանքերը եւ նշել, որ Միացյալ Թագավորությունն աջակցում է այդ գործընթացին ու շահագրգռված է մեր տարածաշրջանում խաղաղության ամրապնդման գործում:

Վինձորյան պալատում կայացել է Սերժ Սարգսյանի հանդիպումը արքայազն Չարլզի հետ: Սերժ Սարգսյանը ներկա է գտնվել արքայազն Չարլզի եւ Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ Արմեն Սարգսյանի նախաձեռնած «Երեւան՝ իմ սեր» նախագծի մեկնարկն ազդարարող ընդունելությանը եւ դրան հաջորդած համերգին՝ աշխարհահռչակ դիրիժոր Վալերի Գերգիեւի եւ մեցցոսոպրանո Դարիգա Նազարբաեւայի մասնակցությամբ: «Երեւան՝ իմ սեր» նախագծի շրջանակում նախատեսվում է Երեւանի կենտրոնում գտնվող պատմաճարտարապետական կարեւոր արժեք ունեցող չորս շինությունների վերանորոգում, որոնք Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հոգածությամբ կծառայեն մեր հասարակության սոցիալապես խոցելի շերտերին ու օժտված երեխաներին:

Սերժ Սարգսյանը Լոնդոնում առանձին հանդիպում է ունեցել նաեւ իր աշխատանքային այցի կազմակերպությամբ Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք ժամանած հայազգի գործարարների եւ ճանաչված հասարակական գործիչների հետ:

Ա. Հ.

# Նախագահի լոնդոնյան ելույթի տարբեր մեկնաբանություններ

Մեծ Բրիտանիայի Միջազգային հարաբերությունների «Չաթեմ Հաուզ» թագավորական ինստիտուտում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը դեռ երկար ժամանակ կքննարկվեն: Երեկ արդեն քաղաքական գործիչները մեկնաբանել են նախագահի ելույթը:

ՀՅԴ Հայ դատի հայաստանյան գրասենյակի ղեկավար **Կիրո Մանոյանին** բավարարել են նախագահի մոտեցումները Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին: Ընդհանուր առմամբ դաշնակցական գործիչը ելույթը գնահատել է դրական, սակայն դժգոհություններ ունի հայ-թուրքական գործընթացի վերաբերյալ: «Անհասկանալի է, մինչեւ ե՞րբ է պատրաստվում նախագահը Թուրքիային հնարավորություն տալ: Համոզված ենք, որ անցել է ժամանակը, որ Հայաստանը հայտարարի, թե Թուրքիայի ոչ անկեղծ կեցվածքի պատճառով այս գործընթացն արդեն տապալվել է, նրան նոր հնարավորություն տալու պատճառ չկա»:

«Սարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի անդամ **Ժիրայր Սեֆիլյանն** էլ բացասական գնահատեց նախագահի ելույթի հատկապես ղարաբաղյան հատվածը: «Եթե ելույթը միամիտ հայ մարդը լսի, տպավորություն կարող է ունենալ՝ ինչ լավ խոսեց երկրի նախագահը. կարծես կարծր կեցվածք դրսեւորեց Ղարաբաղի հարցում: Բոլորովին այդպես չէ: Հենց երեկ նա հրապարակայնորեն թուրքական կողմին հասկացրեց, որ պատրաստ է վերադարձնել ազատագրված տարածքները: Նա խոսում էր ԼՂԻՄ-ի մասին, խնդրում աշխարհին՝ ասելով, որ ԼՂԻՄ-ը մենք չենք կարող զիջել: Մնացածի մասին երբ չի ասում, նշանակում է՝ մնացածը պատրաստ է զիջել», նկատում է Սեֆիլյանը: Ըստ նրա, եթե նախագահ Սարգսյանը համոզված լինի, որ չի կորցնի իր աթոռը, այսօր կստորագրի Արցախի ազատագրված տարածքների վերադարձման փաստաթուղթը: «Արցախում կա այն ներուժն ու զինվորական, սպայական կազմը, որը պատրաստ է չենթարկվել այդ հրամանին»:

ՀՀԿ մամուլի քարտուղար **Էդուարդ Շարմազանովը** կարեւորեց նախագահի ելույթի հատկապես այն հատվածը, որտեղ հայ-թուրքական սահմանի հնարավոր բացմանը կհրավիրվի նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը.«Դրանով սեփական օրինակով տարածաշրջանի մյուս երկրների ղեկավարներին ցույց է տալիս, որ ամեն խնդիր կարելի է լուծել ոչ թե ռազմական, այլ՝ բանակցությունների ճանապարհով»: Շարմազանովը վստահ է, որ նախագահն իր ելույթում հավասարիմ մնաց ստանձնած պարտավորություններին՝ նշելով, որ Արձանագրությունները կուղարկվեն ԱԺ՝ մեկ անգամ եւս փաստելով, որ Հայաստանը վստահելի գործընկեր է: «Նախագահը մեկ անգամ եւս պատրաստակամություն հայտնեց եւ նշեց, որ մենք Արձանագրությունները վավերացնելու խնդիր չունենք, եթե Թուրքիան դրանք վավերացնի: Ավելին, նախագահը շատ հստակ նշեց, որ եթե հաստատվեն այն կասկածները, որ Թուրքիայի նպատակը ոչ թե Արձանագրությունները վավերացնելն է, այլ՝ գործընթացը ձգձգելը, գործընթացը կդադարեցվի»:

«Ընդամենը արտաքին աշխարհի առջեւ «պուպուշ» երեւալու հերթական փորձ»: Սա ԱԺ «Ժառանգություն» խմբակցության անդամ **Արմեն Մարտիրոսյանի** տեսակետն է: «Կարծես թե իշխանությունները արագացված գործընթացի կողմնակից են եւ սրանով փորձում են հավաստիացնել, որ ինչ տեքստով ստորագրել են, այնպես էլ պատրաստ են վավերացնել Արձանագրությունները»: Մարտիրոսյանը նախագահի ելույթից հետո էլ շարունակել է մնալ այն համոզմանը, որ իշխանություններն իրենց վերցրած պարտավորություններն ու արտաքին աշխարհի թելադրանքն ամբողջովին պատրաստ են իրացնել՝ առանց հաշվի առնելու Հայաստանի ազգային եւ պետական շահերը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 2/11/2010 10:04 PM Page 1



ԳԻՏԱԺՈՂՈՎ

# Հայ-ռուսական հարաբերությունների անցյալը, ներկան ու ապագան



Փետրվարի 9-11-ը Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում (ՀՊՄՀ) կազմակերպվել էր հայ-ռուսական հարաբերությունները թեմայով գիտաժողով՝ նվիրված պատմաբան, պրոֆեսոր Զավեն Գրիգորյանի ծննդյան 100-ամյակին, որը լրացավ այս տարվա հունվարին։ Զավեն Գրիգորյանը ստեղծել է Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների պատմագիտական դպրոցը, նրա աշխատություններից են «Ռուս եւ հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը», «Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի սկզբին», «Հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը»։ Հայ-ռուսական հարաբերությունների մասին Զավեն Գրիգորյանը գրել է 10-12 մենագրություն, չհաշված հոդվածները։

Գիտաժողովի կազմակերպիչները էին ՀՊՄՀ-ի ռեկտորատը եւ համաշխարհային պատմության ամբիոնը, մասնակցում էին Հայաստանի Հանրապետության եւ Արցախի տարբեր համալսարանների դոցենտներ, գիտությունների թեկնածուներ, դոկտորներ։

«Գիտաժողովը կազմակերպվեց ոչ միայն գիտության զարգացմանը նպաստելու, այլեւ հայ դիվանագետներին ու պետության ղեկավարներին օգնելու նպատակով։ Գիտաժողովին ներկայացված շատ նյութեր հրատարակվելու են, եւ պետության ղեկավարները իրենց սեղանին ինչքան շատ ունենան Հայաստանի եւ այլ պետությունների հարաբերություններին վերաբերող նյութեր, այնքան կնվազի նրանց սխալվելու հնարավորությունը», ասաց համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Վալերի Ղլեչյանը**։

Գիտաժողովի առաջին օրը նվիրված էր հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը։ Ամսի 9-ի նստաշրջանում եղավ 11 զեկուցում, որից երկուսը նվիրված էին Զավեն Գրիգորյանի գործունեությանն ու ժառանգությանը։

Ըստ Վալերի Ղլեչյանի՝ Զավեն Գրիգորյանն իր աշխատություններում զարգացրել է այն տեսակետը, որ 1828 թվականին Հայաստանի միացումը Ռուսաստանին, եւ երկկողմ հարաբերությունների հետագա զարգացումները ունեցել են միայն դրական նշանակություն Հայաստանի համար։

«Այսօրվա քաղաքական ֆոնի վրա մենք վերաիմաստավորեցինք Զավեն Գրիգորյանի աշխատությունները», ավելացրեց Վալերի Ղլեչյանը։

Գիտաժողովի 2-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվեցին Հայաստանի եւ Ռուսաստանի արդի քաղաքական գործընթացները, պատրաստվել էին 9 զեկույցներ՝ «Արցախյան հիմնախնդիրները ռուս-թուրքական հարաբերություններում 1991-1993», «Հայ-ռուսական հարաբերությունների հիմնական փուլերը հետխորհրդային շրջանում»։ **«Ազգ»** օրաթերթի քաղաքական մեկնաբան **Արմեն Մանվելյանը**, որ նույնպես մասնակցում էր գիտաժողովին, պատրաստել էր «Էներգետիկ գործոնը հայ-ռուսական հարաբերություններում» զեկուցումը։

Գիտաժողովի վերջին օրը կազմակերպվեց կլոր սեղան, որի ժամանակ քննարկվեցին հայ-ռուսական հարաբերությունների հետագա զարգացումները եւ թե ի՞նչ է սպասվում Հայաստանին ապագայում։

«Տարբեր եզրահանգումներ ունեցանք, օրինակ, պաշտպանվեց այն տեսակետը, որ Զավեն Գրիգորյանն իր ժամանակին ճիշտ է եղել։ Եզրահանգում եղավ, թե Ռուսաստանը միշտ բացասական դեր է խաղացել հայ ժողովրդի համար, բայց, ընդհանուր առմամբ, տիրապետող էր այն կարծիքը, որ ապագայում Հայաստանի եւ Ռուսաստանի հարաբերությունները պետք է կառուցվեն իրավահավասարության հիմքի վրա։ Ճիշտ է, Հայաստանն ու Ռուսաստանն ունեն իրավահավասար պայմանագրեր, բայց գործնականում հաճախ այլ բան ենք տեսնում», ասաց Վալերի Ղլեչյանը։

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌԱԶՄԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ

# «Ադրբեջանի քարոզչությունը շատ խոցելի է, քանի որ ընդհանրապես չի խոսվում հարձակողական պատերազմի զրկանքների մասին»

Հանրային խորհրդի անդամ, ռազմական հոգեբան **Դավիթ Ջամալյանը** հատկապես վտանգավոր է համարում ասեկոսեների միջոցով պատերազմի սպառնալիքի մասին տեղեկությունների տարածումը եւ կարծում է, որ դրանց հարկավոր է արագ հակազդել։

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ ռազմական հոգեբանը նկատել է, որ պատերազմի վտանգը միշտ առկա է եղել եւ կլինի։ Նրա խոսքով՝ անհրաժեշտ է, որ հասարակությունը միշտ ունենա զգոնություն, սակայն խնդիրն այն է, թե որքանով է նպատակահարմար պատերազմի հավանականության մասին խոսել այն պահին, երբ դրա հիմքերն առկա չեն։ Ռազմական հոգեբանը համոզված է, որ արցախյան պատերազմի վերսկսման վտանգն այսօր նույնչափ է, որքան եղել է միշտ։

Հոգեբանը կարծում է, սակայն, որ այդ սպառնալիքը պետք է դառնա ոչ թե խուճապի կամ հուսահատության պատճառ, այլ՝ պետական շինարարության արդյունավետ մեխանիզմ։

Ռազմական հոգեբանը հատկապես ասեկոսեների միջոցով պատերազմի սպառնալիքի մասին տեղեկանալն է վտանգավոր համարում։ Նրա խոսքով՝ երբ պատերազմի սպառնալիք է հնչում, ասենք, Ալիեւի հայտարարությամբ, քաղաքականապես բանիմաց մարդկանց համար լուրջ տագնապի պատճառ չէ։ «Վերլուծելով՝ կարելի է հասկանալ, որ ընդամենը քարոզչության մի մաս է կազմում կամ հոգեբանական ճնշում գործադրելու նշանակություն ունի»։

Իսկ որքանո՞վ է այսօր պատրաստ պատերազմին Ադրբեջանը. «Ես կարծում եմ՝ չթերագնահատելով հանդերձ թշնամուն, ադրբեջանական հանրությունն այդքան էլ պատրաստ չէ հարձակողական լուրջ պատերազմի»։ Ադրբեջանական հանրույթում ստեղծվել է վստահության այն զգացողությունը, որ իրենք հարուստ են, լավագույն զենքերը կգնեն, քանակապես էլ են առավել եւ խնդիրը կկարգավորեն։ Երկրորդ հոգեբանական ռեսուրսն ատելությունն է հայի տեսակի հանդեպ։ Զուգահեռաբար Հայաստանի թույլ լինելու քարոզչություն է տարվում։ Սակայն, մասնագետի կարծիքով, Ադրբեջանի քարոզչությունը շատ խոցելի է, քանի որ ընդհանրապես չի խոսվում հարձակողական պատերազմի զրկանքների մասին, իսկ հարձակողական պատերազմի ժամանակ հարձակվող կողմն ավելի շատ է զոհ տալիս։ Ադրբեջանական հանրույթն իր ղեկավարներից այդ խնդիրների մասին ոչինչ չի լսում։

Ն. Մ.

# ԼՂՀ արտաքին գործերի նախարարը՝ Լիբանանում

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարար Գեորգի Պետրոսյանը փետրվարի 10-ից եռօրյա այցով գտնվում է Լիբանանում։ Այդ երկրում ՀՀ դեսպան Աշոտ Քոչարյանի հետ Պետրոսյանը հանդիպել է Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինին։

Նախատեսված են նաեւ Գեորգի Պետրոսյանի հանդիպումները Լիբանանում գործող հայկական քաղաքական կուսակցությունների ղեկավարների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ։

Հ. Ա.

# Ծաղկում է միայն ուղեղների «արտահոսքը»

*1-ին էջից*

Նշված խնդրի լուծման ճանապարհներից մեկը ինովացիոն տնտեսության կառուցման խթանիչների ներդրումն է։ Նոր տեխնոլոգիաներ, ժամանակակից մենեջմենթ եւ հայրենասեր չինովնիկություն, որը դրսեւորվում է հայրենական արտադրության աջակցությամբ՝ ահա՛ հաջողության այն բանաձեւը, որի օգնությամբ շատ երկրներ դարձել են միջազգային կամ գոնե տարածաշրջանի մակարդակով տնտեսապես հզոր պետություններ։

Ինովացիոն տնտեսությունը գիտելիքահենք արտադրությունների եւ մենեջմենթի միասնական համակարգն է, որտեղ ամենահիմնական գործոնը դառնում է մարդը։ Այստեղ ավելորդ չէ նշել, որ այսօր Հայաստանն ունի ոչ միայն եւ ոչ այնքան աշխատատեղերի խնդիր, որքան որակյալ աշխատուժի, որի պակասը զգացվում է բիզնեսի բոլոր մակարդակներում, այնինչ նախկինում մենք որպես առավելություն էինք դիտարկում մեզ մոտ առկա որակյալ կադրերի բանակը։ Ասվածը հատկապես վերաբերում էր գիտության ասպարեզին։

Խորհրդային կարգերը մեզ թողել էին լուրջ գիտական ժառանգություն։ Հայ գիտնականների աշխատությունները անբաժանելի մասն էին կազմում համաշխարային գիտական ներուժի, թվարկեմ միայն մի քանի անուն՝ Վիկտոր Համբարձումյան, Գրիգոր Գյուրզադյան, Սերգեյ Մերգելյան, Արմենակ Մնջոյան, Արտեմ եւ Իսակ Ալիխանյաններ այս թվարկումը դեռ երկար կարելի է շարունակել։

Հիմա լրիվ այլ պատկեր է։ Խորհրդային միության փլուզումից հետո մեծ թափ առած արտագաղթն իր հետ տարավ նաեւ հազարավոր գիտաշխատողներ, գիտության մեր հսկաների ստեղծած գիտահետազոտական ինստիտուտները և այլ գիտական օջախներ ամայացան, քանդվեցին իսկ որոշները թալանվեցին։ Սկսվեց «ուղեղների արտահոսքը»։

Ռուսաստանի Դաշնությունը եւ Արեւմուտքը, ի տարբերություն մեր այդ տարիների իշխանության, չափազանց բարձր գնահատելով հայ գիտնականի միտքն ու նրա ներուժը, մեր գիտնականների համար ստեղծեցին աշխատանքային բարեկեցիկ պայմաններ, ինչը չարվեց Հայրենիքում, և հայ գիտական միտքը սկսեց ծառայել օտարին։ Այսօր ողջ աշխարհում՝ Եվրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում եւ Ռուսաստանում արդեն գերակայող է դարձել այն միտումը, որ իրենց երկրներ ներգաղթելու հնարավորություն են տալիս առավելապես, բարձրագույն կրթությամբ,որեւէ ասպարեզում մասնագիտացած, երիտասարդ ընտանիքներին։ Այսօր Հայաստանում այն աստիճան է սրվել արհեստավարժ կադրերի դեֆիցիտը, որ հայրենական արտադրությունը կանգնած է կադրային աղետի եզրին։ Դժվար է գտնել ոչ միայն արհեստավարժ հաշվապահներ, ֆինանսիստներ, դիզայներներ, այլեւ արհեստավարժ արհեստավորներ (եռակցողներ, փականագործներ, հյուսներ եւ այլն)։ Առանց առաջավոր գիտական ներուժի մենք ազգովին կնմանվենք թաքար-մոնղոլական քոչվոր ցեղերին։ Միգուցե ազգովին սկսենք ոչխար պահել, սակայն նույնիսկ արհեստավարժ եւ աշխատասեր ոչխարապահներ չունենք։ Այսօր այդ գործը փայլուն կատարում են եզդիները, ինչի շնորհիվ հարգանքի արժանի են։ Այս թեմային կանդրադառնանք հետագայում։ Հայրենական խոշոր արտադրողները համակարգաստեղծ հիմնարկներ են եւ ոչ միայն աշխատատեղ են ստեղծում, այլեւ ստեղծում ու պահպանում են աշխատանքային դպրոցը։ Հայրենական արտադրողների շնորհիվ է, որ երկրի լավագույն մասնագետների մի մասը դեռ շարունակում է ապրել եւ աշխատել հայրենի հողում։ Ի տարբերություն հայրենական արտադրողների, ներմուծողները գրեթե լումա չունեն ուղեղների արտահոսքը կանխելու գործում եւ նույնիսկ նպաստում են դրան։ Կան դեպքեր, երբ Հայաստան է ներմուծվում այն ընկերությունների արտադրանքը, որոնց լավագույն մասնագետները Հայաստանից արտագաղթած մեր հայրենակիցներն են։

Ճիշտ է, գիտությունների թեկնածուների եւ դոկտորների քանակի առումով միգուցե մենք այսօր ունենք ավելի մեծ թիվ, քան 90-ականների սկզբին էր , բայց որակական առումով բացասական հաշվեկշիռն ակնհայտ է։ Հիմա այնպիսի մարդիկ են գիտական ոլորտներում դիպլոմներով աչքի ընկնում, որ իսկական գիտնականները, երեւի, ամոթից լռում են, բայց սա այլ խոսակցության թեմա է։

Կուզենայի բոլորիս ուշադրությունը կենտրոնացնել «գիտակրթական համակարգ-տնտեսության իրական հասված փոխհարաբերություններին, որոնք ներկայիս Հայաստանում գրեթե չեն գործում։ Իսկ եթե մենք ուզում ենք ինովացիոն տնտեսություն ունենալ եւ աշխատանքի միջազգային կամ տարածաշրջանային բաժանման մեջ գտնել մեր հասստուն տեղը, ապա միանշանակ է, որ, պատկերավոր ասած, մեր ուղեղները պետք է ոչ թե արտահանվեն, այլ ընդհակառակը՝ պետությունը պետք է պայմաններ ստեղծի, որպեսզի մեր հայրենակիցներն իրենց ունակությունները իրացնեն Հայաստանում։ Այլապես մենք տարեցտարի կվերածվենք զարգացած երկրների անորակ ապրանքների սպառման շուկայի։

Օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում կա պետական մոտեցում։ Համապատասխան ֆոնդերի միջոցով ֆինանսավորվում են գիտական ծրագրերը, որոնք ունեն գործնական նշանակություն, նանոտեխնոլոգիաների ոլորտում կան հատուկ պետական ծրագրեր, այդ իսկ պատճառով գիտություն-տնտեսություն կապը առավել էֆեկտիվ է, իսկ պետական ներդրումները այդ ոլորտում շահավետ։ Էլ չեմ խոսում զարգացած շուկայական երկրների մասին, որտեղ շատ ամուր հիմքերի վրա է դրված գիտելիքասար տնտեսության համակարգը։

Անշուշտ, մենք չունենք ՌԴ ֆինանսական հնարավորությունները, բայց պետք է ձգտենք մեր ունեցածի չափով տեր կանգնել մեր գիտական պոտենցիալին, որպեսզի մարդիկ չլքեն Հայաստանը։

Այսօր հին սերնդի մասնագետները ծերանում են, իսկ նոր սերունդը, կրթական համակարգի թերի եւ կոռումպացված լինելու պատճառով, շատ է զիջում նրանց։ Նոր սերնդի այն փոքրաթիվ հատվածը, որն ունի մասնագիտական բարձր մակարդակ, տարբեր պատճառներով հիասթափված կամ դժգոհ, լքում է երկիրը եւ իր մտքով ու կարողություններով հզորացնում օտար պետությունները։ Մենք չենք կարող Ազգային ժողովում մշակել այնպիսի օրենքներ, որոնք կարգելեն մեր երիտասարդ մասնագետներին լքել հայրենիքը։ Սակայն կարող ենք ունենալ այնպիսի օրենքներ, որոնք կաջակցեն հայրենական արդյունաբերությանը։ Դա էլ իր հերթին կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը եւ երկրի մարդկային մտավոր կարողությունները կծառայեցնի մեր երկրի տնտեսության զարգացմանը։ Այս ձեւով մեր գիտաշխատողները, մասնագետները եւ արհեստավորները հնարավորություն կունենան աշխատելու հայրենական որեւէ արդյունաբերական ձեռնարկությունում, պատշաճ կերպով վարձատրվեն եւ արժանապատվորեն ապրեն իրենց հայրենիքում, առանց արտագաղթելու մասին հետին մտքերի։ Հույսով եմ, որ մեր կառավարությունը սա քաջ գիտակցում է։

Ուղեղների արտահոսքը մեր վաղվա հետընթացի հիմնական նախապայմանն է դառնալու, եթե արդեն չի դարձել։ Սա այն դեպքն է, երբ արտահանումն ի վնաս մեզ է։ Ուստի կարիք կա վերանայելու եւ բարեփոխելու պետության վերաբերմունքը հայրենական արտադրության եւ տեղական կադրերի պատրաստման ու պահպանման նկատմամբ։ Առանց զարգացած հայրենական արտադրության մենք չենք կարողանա երբեւէ ունենալ տնտեսական նվաճումներ եւ բարեկեցիկ կյանք ապահովել մեր երկրի քաղաքացիների համար։

AZG NEW PDF.qxd 2/11/2010 10:03 PM Page 1



## Լեզու

# Օտարամոլության ճիրաններում

Մեր օրերի երկարաշունչ ֆիլմաշարերի տխուր հետեւանքների մասին շատ է ահազանգվել: Իսկապես, կասկած չի հարուցում, որ «ուսանելի» լավ դաս քաղած նոր սերունդը մոտ ապագայում արձագանքելու է անկանխատեսելի քայլերով առօրյա կյանքի բոլոր ոլորտներում: Խոսքը զուտ ամենազոր դոլարի եւ սանձարձակ, անխորտակ կոռուպցիայի առկայության պայմաններում զորբաների ճանապարհը հատելու համարձակություն դրսեւորած, սրան-նրան որեւէ ժամանակ եւ, գլխավորը, անպատիժ սատկեցնելու (տերմինը վերցված է ֆիլմերից) մասին չէ, թեեւ, ըստ էության, հենց սա է սցենարների առանցքային միտումը: Այլեւս կարծես ոչ ոքի չի զարմացնում եւ այն, որ հերոսների լեզուն կիսագողական է (վնասուրի, բրատ ջան, սուչար, հարիֆ, լոխ...), լեզուն՝ կիսատ-պռատ ռուսերենով (վաբշե, դաժե, կարոչե, դավայ, աբիժնիկ...): Անձամբ ինձ ղորմելի վիճակում է հայոց լեզվի դասավանդման գործը հանրակրթական դպրոցներում, եւ պատահակա՞ն են արդյոք այն անբավարար գնահատականները, որ ապագա ուսանողները ստանում են ընդունելության քննություններ հանձնելիս:

Անդրադառնալով ֆիլմաշարերում տեղ գտած լեզվական աղճատումներին, չի կարելի անտեսել եւս մեկ բոլորովին խորթ երեւույթ՝ ռուսերենից կատարված բառացի, իմա՝ անմիտ, արհեստական, իրենց էությամբ տրամաբանությունից զուրկ փոխառությունները: Սա, հարկ է նկատել, վաղեմի ավանդություն ունի, ուստի խոր արմատներ է արձակել: Ունայնախոս չլինելու համար բերեմ ասածս հաստատող մի քանի բնորոշ օրինակներ՝ վերցված թե՛ կինոնկարներից, թե՛, ցավոք, գրական ստեղծագործություններից. «Կյանքում ինչ տեսակի սրիկաների ասես չեմ հանդիպել»: Անմիջապես զգացվում է ռուսական մտածելակերպի ազդեցությունը. «Каких только мерзавцев не встретил я в жизни»: Ներեցեք, ինչպես թե «չեմ հանդիպել», չէ՞ որ խոսքը ճիշտ հակառակը, կայացած բազում հանդիպումների մասին է: Դե արի ու հասկացիր՝ հանդիպե՞լ է, թե՝ ոչ:

Մի՞թե օտարամոլություն չէ այն, երբ ամեն օր լսում ենք՝ «բանը նրանում է» կոշտ ու կոպիտ խոսքերը (дело в том), եւ մի՞թե պարզ ու սահուն չի հնչում «բանն այն է»: Նույնը կարելի է ասել եւ «խոսքը գնում է»-ի մասին (речь идет): Մեկը հարցնող լինի՝ ո՞ւր է գնում եւ եթե գնում է, կարո՞ղ է հետ էլ գալ: Հարկ չկա գնալու կամ գալու մասին հիշեցնել, այլ ուղղակի ասել՝ «խոսքը այսինչի կամ այնինչի մասին է»: Մեզանում շատ է տարածված «դուրս է գալիս» գավեշտական արտահայտությունը, որ օգտագործվում է նախադասություններում, ասենք, այսպիսի՝ «դուրս է գալիս, նա է կրակել...» (выходит, он стрелял): Այս դեպքում ինչպես կհնչեր մեկ այլ նման նախադասություն՝ «դուրս է գալիս, նա ներս է մտել»: Սակայն կատակը մի կողմ, պարզապես ո՞ւմ համար հասկանալի չէ, որ խոսքն, իհարկե, դուրս ու ներս անելու մասին չէ, որ ասածի հայերեն իմաստը բոլորովին այլ է՝ պարզվում է, ստացվում է ուրեմն...

Ֆիլմերից մեկում քննիչը պետք է զեկուցի՝ «Պարզեցինք, որ նա է (անունը կարեւոր չէ) կատարել սպանությունը»: «Ինչի՞ց վերցրիր», այս խելաթափ հարցով իր հետաքրքրությունն է արտահայտում շեֆը (с чего взял?): Որպես ծիծաղելի պատասխան կարելի էր ասել՝ «սեղանի վրայից»: Սակայն եթե լրջորեն խոսենք, ապա դժվար չէ հասկանալ, որ պետի հայերեն հարցը պետք է հնչեր այսպես՝ դու համոզվա՞ծ ես, կամ ինչո՞ւ ես այդպես կարծում:

Հար ու նման օրինակներ կարելի է էլի բերել, բայց այսքանն էլ բավական է, որպեսզի համոզվենք՝ ռուսական մտածելակերպով շարադրանքները ուղղակի մեռցնում են մայրենիի կենդանի լեզուն, նրա ոգին, հետեւաբար վերջապես ժամանակն է հետեւություններ անելու, այն մաքրելու աղբից: Սա, ի դեպ, հավասարապես վերաբերում է նաեւ սոսկ տերմիններին:

Մի առիթով հանճարեղ Ա. Էյնշտեյնը (թե ինչու ոչ Էյնշտայն՝ չեմ հասկանում) ասել է. «Միայն երկու հավերժ, անվերջ բան կա՝ տիեզերքն ու հիմարությունը: Թեեւ տիեզերքի պարագայում ես այնքան էլ համոզված չեմ»: Սա, պետք է խոստովանել, ինչ-որ չափով առնչություն ունի նաեւ մեր լեզվի հետ: Ահավասիկ, սփյուռքից մեր հայրենակիցները անկեղծորեն զարմանում են եւ լիաթոք ծիծաղում, երբ «Ինչպե՞ս ես» հերթապահ հարցին հայաստանցի հյուրը մի տեսակ անտարբեր պատասխանում է. «Ոչինչ»: Ոչի՞նչ, բայց եղբայր սիրելի, դա, կներեք, ոչինչ էլ չի արտահայտում: Մեկը ժամանակին ասել է՝ «Ничего», ապա թարգմանաբար տարածվել, ու արմատացել է մեզանում: Ինչպե՞ս ազատվել մոլախոտից, ճարը չենք կարողանում գտնել, եւ վերջ:

Մեկ այլ օրինակ, մի 30 տարի առաջ ինչ-որ մեկի խելքին փչել է բարձրաձայն, հավանաբար լեզուն ավտոբուսում կամ ժողովում իր դժգոհությունն արտահայտել, որ իրեն բնակարան են հատկացրել Երեւանի ծայրամասում, բոլորից ու ամեն ինչից շատ հեռու, որ ինքը այժմ, կարելի է ասել, ապրում է Բանգլադեշում: Եվ խնդրեմ, այդ անունն այսօր կարող եք կարդալ երթուղային փոխադրամիջոցների ցուցանակի վրա: Այդքան հեշտ ու դյուրին կերպով երեւի միայն մենք կարող ենք սեփականացնել օտարոտի անվանումները: Տեղին է ասել, որ տարացիորեն օրերս թերթերից մեկում տպագրվել էր «Բանգլադեշի» հեղինակի պատմությունն այն մասին, թե ինչպես է ծնունդ առել ու երեւանյան գրանցում ստացել այդ ասիական երկիրը: Մնում է թաղապետին խնդրել նրա անունով կոչել նոր փողոցներից մեկը:

Որպես մարզական լրագրող՝ չեմ կարող առիթը չօգտագործել եւ չառաջարկել փոխել եւս մեկ տարածված տերմին, թեեւ համոզված եմ՝ ընդդիմախոսների թիվը փոքր չի լինի: Խոսքը «շախմատի» մասին է, մի տերմին, որի ոչ մասն է հայերեն, ոչ էլ, առավել եւս՝ «շախը»: Ասում ու զգում եմ զայրացածների հարցը՝ ինչպե՞ս թե, շախմատից է՞լ հրաժարվենք: Ի՞նչ կա որ, եւ ի՞նչ կասեն նրանք ի պատասխան հակառակ հարցին՝ այդ ինչպե՞ս պատահեց, որ մենք կուլ գնացինք ուրիշների հորդորներին եւ հրաժարվեցինք մեզ ավելի հոգեհարազատ ճատրակ տերմինից: Էլ չեմ ասում, որ սփյուռքում այսօր էլ թե՛ խոսակցական լեզվում, թե՛ մամուլում գործածվում է հենց ճատրակ: Այն էլ ասեմ, որ ճատրակ բառն են օգտագործում նաեւ վրացիները (մեր հարեւանները ընդհանրապես ազգայնացրել են մարզաձեւերի անվանումները՝ ի՞նչ ֆուտբոլ կամ բասկետբոլ, թենիս կամ վոլեյբոլ):

Օտարամոլության հարցերում, սա պետք է ցավով ընդգծել, մենք հաստատապես առաջին դիրքերն ենք զբաղեցնում եւ եթե չհրաժարվենք խելակորույս միտումից, մոտ ապագայում վստահորեն տեղ կգտնենք Գինեսյան ռեկորդների գրքում: Ռուսական ֆիլմերից մեկում ոստիկանը ներս մտնելով պետի առանձնասենյակ, զեկուցում է. «Վնասազերծվել է մի ավազակախումբ, ձերբակալվել է եւ ղեկավարը՝ Համլետը»: «Ի՞նչ է, հա՞յ է», հետաքրքրվում է պետը, համոզված լինելով, որ չի սխալվում: Այո, մեծն Շեքպիրի նկատմամբ անհուն սերը մենք հավաստիացրել ենք՝ անմահացնելով նրա ստեղծագործությունների գրեթե բոլոր հերոսներին: Տեղին է հիշեցնել մի դրվագ Լենինի մասին պատմող մի ֆիլմից: Նա գանգատվում է Նադեժդա Կոնստանտինովնային, ասելով. «Տես, թե ինչ սոսկալի անուններ ունեն մեր ղեկավար ընկերները՝ Ստալին, Մոլոտով, Կամենեւ...»: Գլխավոր առաջնորդի մտքով էլ չէր անցնի, թե մենք ինչ անուններ ենք տալու մեր նորածիններին ու դրանով ապացուցելու մեր նվիրվածությունը կոմունիզմի մեծ գործին՝ Լենդրոշ եւ Լենվել, Վիլեն ու Վլադիլեն, Ֆելիքս ու Լավրենտ, Վիստալ ու Մելս, Կառլեն ու Մառլեն, տո, Ֆրունզե ու Շչորս ու նույնիսկ Սնայպեր... Արժե՞ շարունակել: Երեւի արժե, մանավանդ որ զավակներին հայկական անուններից զրկելու ստոր միտումը, ավաղ, շարունակվում է: Վերջերս թերթերից մեկում կարդացի, որ Հայաստանի պաշտոնական պատվիրակությունը մեկնում է արտասահման, հասկանալի է, պետական կարեւոր հարցեր քննարկելու:

Բայց ինձ գրավեցին մեկնողներից մի քանիսի անունները (ազգանունները իմաստ չունի ներկայացնել)՝ Սերյոժա, Գրիշա, Վալոդյա... Ի՞նչ եք կարծում, այս դեպքում հարմար չէ՞ր լինի, եթե պատվիրակության ղեկավարն էլ լիներ մի ինչ-որ Կոլյա Վանյաեւիչ:

Տերմին-անվանումների հետ կապված՝ վերջապես եւս մեկ հիվանդագին սովորության մասին, երբ գերի մնալով զուտ ռուսական սկզբունքներին, նույնը պարտադրում ենք եւ մեր լեզվին, թեեւ բոլորի համար հասկանալի է դրա արհեստական իմաստը: Դասական մի օրինակ՝ Մեքսիկա եւ Մեխիկո, երկրի եւ մայրաքաղաքի անունները, որ կազմված են նույն արմատից: Բայց Էյնշտեյնի համոզմունքը հաստատող մեկը ժամանակին նպատակահարմար է գտել լատինական x տառը մի դեպքում թողնել այդպիսին, իսկ մյուսն օգտագործել որպես ռուսական x (խ):

Այդպես ծնունդ առավ ու նաեւ մեզանում հաստատվեց մայրաքաղաքի Մեխիկո անունը: Տեքսասը՝ Տեխաս: Միայն հասկանալի չէ, թե ինչո՞ւ այս սկզբունքից ելնելով, ասում ենք տաքսի եւ ոչ տախի, քսերոքս եւ ոչ խերոխ, Օքսֆորդ եւ ոչ Օխֆորդ: Բայց ուրախացնող նորույթ էլ կա. գոնե համակարգիչների հետ գործ ունեցողները շտկել են որոշ տերմիններ՝ ասում են ոչ թե դուբլ, այլ՝ դաբլ, ոչ թե միկրո, այլ՝ մայկրո... Համոզված եմ, այս միտումը, թեկուզ դժվարությամբ, զարգացում է ստանալու: Ամեն դեպքում, անվանումների հարցում հարկ է հարազատ մնալ արմատներին ու մերժել արհեստականությունը:

Հասկանում եմ, գուցե ծայրահեղ առաջարկություններ եմ անում, գուցե ինչ-որ բանում նաեւ սխալվում եմ: Ուրախ կլինեմ, եթե լեզվաբանները ուղղեն ինձ: Մի բանում սակայն կասկած չունեմ՝ մեր մայրենի լեզվի մեջ արհեստականորեն մուտք գործած օտարոտի բառերի խորթ արտահայտություններից, ամեն տեսակի լեզվական աղբից պետք է ազատվել: Հայոց լեզուն հարկ է զտել ու մաքրել, որքան շուտ՝ այնքան լավ:

Անձամբ ինձ ոչ պակաս է նյարդայնացնում, որ այդ լեզուն կիսագրագետ է, երբեմն էլ գռեհիկ: Սա, ի դեպ, միայն ֆիլմաշարերին չի վերաբերում: Հեռուստատեսային ելույթների ժամանակ լեզվառճական բազում մեղանչումներ, պարզապես անհեթեթություններ են շարունակ թույլ տալիս, այսպես կոչված, շոումենները, առանձին երգիչներ, ԱԺ պատգամավորներ ու նույնիսկ բարձր պաշտոններ զբաղեցնողներ (ձեր մոտ, քո համար, նախագահն, բարձր ծափահարություններ, ձեր անունը ուղարկեք, առաջի անգամ, խոսամ, իրավացի եմ 100 տոկոս եւ այլն, եւ այլն): Հիմա էլ համաճարակի պես տարածվել են ականջ ծակող «ուզում եմ ասեմ» (երգեմ, սովորեմ, խնդրեմ...) տարօրինակ արտահայտություններ, այսինքն՝ դիմորոշ հոդերի անտեղի կրկնություններ: Ակամա մտածում եմ՝ հնարավո՞ր է երեւակայել, որ մի պատահական մուժիկ երբեւէ թույլ տա մոտավորապես այսպիսի արտահայտություն՝ «Хочу скажу, что...»:

Ինչ խոսք, մոսկովյան հեռուստահաղորդաշարերում էլ գռեհկության պակաս չի զգացվում, եթե չասեմ ավելին: Սակայն լեզվական ու քերականական կանոնները այստեղ պահում են սրբորեն, եւ դա հասկանալի է՝ վարկանիշի, հեղինակության հարց է, հետո՝ ռեժիսոր կա, ստուդիայի պատասխանատու, որոնց ուշադրությունից չի վրիպի որեւէ անփութություն: Ավելին ասեմ, թեկուզ լեզվական աննշան սայթաքում, բառերի կրկնություն, նույնիսկ ոչ ճիշտ շեշտադրում՝ «մեղավորն» անպայման ներողություն է հայցում: Մեզ մոտ, սակայն, քաղաքավարության այդ տակտը կարծես օրենքով է արգելված: Լեզվական ի՞նչ կուլտուրայի մասին է խոսքը, երբ ինտելեկտուալ համարվող «Սեւ եւ սպիտակ» հեռուստախաղի ժամանակ աջ ու ձախ ոտնատակ է արվում մայրենին, իսկ երգիչ-երգչուհիների մրցույթների ժյուրիների անդամները ասես դարձել են մեկ հատիկ բառի՝ «շատի» գերիներ՝ «շատ հավանեցի», «շատ զգացված եմ», «շատ-շատ ապրեք»: Ինչպես չասես՝ շատ չեղա՞վ, մի՞թե այդ կախարդական բառը չունի հոմանիշներ:

Հաճախակի լսելով այս ամենը, մի ավելորդ անգամ համոզվում եմ, թե որքան ցածր, եթե չասեմ՝ ո-

**ՄԻՍԱԿ ՆԱԶԱՐՅԱՆ**

---

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# Հայաստանը շարունակում է մնալ յոդի դեֆիցիտի էնդեմիկ գոտի

**Չնայած Հայաստանում այսօր աղն ու ջուրը յոդացվում են, սակայն դրանց մեջ եղած յոդի քանակությունը մարդու օրգանիզմի համար դեռ բավարար չէ: Յոդի դեֆիցիտ ունենում են լեռնային երկրները, որոնք հեռու են ծովերից ու օվկիանոսներից: Հայաստանը, լինելով լեռնային երկիր, համարվում է յոդի դեֆիցիտի էնդեմիկ օջախ: Յոդը օրգանիզմի բնականոն գործունեությունն ապահովող կարեւոր տարրերից մեկն է, մտնում է վահանաձեւ գեղձի հորմոնների կազմի մեջ եւ ապահովում դրանց սինթեզը:**

**«Մարդու օրգանիզմին անհրաժեշտ է 75-125 միկրոգրամ յոդ: Քանի որ աղի ու ջրի միջոցով մարդը դրա անհրաժեշտ քանակը չի ստանում, հետեւաբար պետք է լրացնի սննդամթերքով: Յոդ կա բանջարեղենի, կանաչեղենի, ձկնեղենի, ընկույզի մեջ», ասում է «Էրեբունի» բժշկական կենտրոնի էնդոկրինոլոգ Սուսաննա Ասատրյանը:**

**Քանի որ Հայաստանը ծովափնյա երկիր չէ, հետեւաբար օդում, ջրում, հողում, հետեւաբար նաեւ սննդում յոդի քանակությունն առատ լինել չի կարող:**

**Ըստ Սուսաննա Ասատրյանի՝ յոդի պակասը վտանգում է հատկապես երեխաների, դեռահասների, հղի կանանց եւ կերակրող մայրերի առողջությունը: Տղամարդկանց առողջության համար յոդի պակասը եւս վտանգավոր է, սակայն կանայք դրանից ավելի շատ են տուժում, որովհետեւ կանանց վահանաձեւ գեղձի հորմոններն ավելի շատ են յոդ օգտագործում, հատկապես հղի կանանց յոդի պակասը կարող է ծանր հետեւանքների բերել, որովհետեւ յոդն անմիջականորեն ազդում է պտղի ձեւավորման ու զարգացման վրա, պատասխանատու է նրա ոսկրային ու կենտրոնական նյարդային համակարգերի, ուղեղի ձեւավորման համար:**

**«Յոդի պակասը կարող է հանգեցնել մինչեւ անգամ հղիության ընդհատման ու վաղաժամ ծննդաբերության, կարող են ծնվել նույնիսկ տարբեր արատներով երեխաներ: Հղի կանայք ու կերակրող մայրերը լավ կլինի, որ յոդի պակասը լրացնեն յոդ պարունակող հատուկ հաբերով», նկատում է Սուսաննա Ասատրյանը:**

**Յոդի պակասի հետեւանքով խախտվում է վահանաձեւ գեղձի աշխատանքը, որից էլ առաջանում են տարբեր հիվանդություններ՝ խպիպ, հիպոթիրեոզ: Հայաստանում այս հիվանդություններով տառապում են հատկապես բարձրադիր մարզերի բնակիչները, որովհետեւ բարձրադիր մարզերում յոդի պակասն ավելի բարձր է թիվ է կազմում:**

**«Խպիպի (զոբի) ժամանակ վահանաձեւ գեղձը մեծանում է, արյան մեջ վահանագեղձի հորմոնների քանակը կտրուկ նվազում է, իսկ հիպոթիրեոզի դեպքում լինում է վահանաձեւ գեղձի ֆունկցիայի անկում, դրանից արդեն կախտահարվեն մարդու օրգան համակարգերը», ասում է էնդոկրինոլոգը:**

**Եթե խախտվում է վահանաձեւ գեղձի աշխատանքը, ապա մարդն սկսում է իրեն ավելի թույլ զգալ, գլխացավեր է ունենում, ընկնում է նրա աշխատունակությունը: Շատ մարդիկ առաջին նախանշանները ունենալու դեպքում էլ շարունակում են բժշկի չդիմել, եւ այդպես էլ ավելի սրում հիվանդությունը:**

**Էնդոկրինոլոգները խորհուրդ են տալիս հնարավորինս շատ օգտագործել յոդ պարունակող սննդամթերք, եւ վատ զգալու դեպքում ժամանակին դիմել բժշկի:**

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

AZG NEW PDF.qxd 2/11/2010 10:04 PM Page 1



# Իսրայելա-ադրբեջանա-իրանական «ընկերություն»

«Այդպես չեն խոսում երկու դիվանագետները, այդպես խոսում են երկու ընկերները», այսպես է մեկնաբանել «Ադրբեջան-Իսրայել» միջազգային ասոցիացիայի նախագահ, նախկին իսրայելցի պատգամավոր **Իոսիֆ Շագալը** Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանի՝ ադրբեջանցի իր գործընկերոջ՝ Էլմար Մամեդյարովի հետ ունեցած զրույցը: Ի դեպ, Շագալը Լիբերմանի գլխավորած պատվիրակության կազմում Բաքվում էր, որտեղ լուրջ երկկողմ պայմանավորվածություններ ձեռք բերվեցին Իսրայելի եւ Ադրբեջանի միջեւ:

Շագալն ընդգծել է, որ Լիբերման-Մամեդյարով հանդիպումը եղել է «հիասքանչ եւ բարեկամական»: Նա հիշեցրել է, որ երկու երկրների միջեւ տնտեսական կապերը լավ զարգացում են ապրում. «Ապրանքաշրջանառությունը մեր երկրների միջեւ հասնում է 4 մլրդ դոլարի: Եվ մենք հուսով ենք, որ Բաքուն, այսքանից հետո, կբացի վերջապես իր դեսպանատունը Թել-Ավիվում», ասել է Շագալը: Սակայն Բաքուն այս վերջինի հաշվով այնքան էլ չի շտապում, մասնավորապես իսրայելա-ադրբեջանական վերջին հանդիպումներում որեւէ նման խոսակցություն չի եղել, բացի այդ, եւ ամենակարեւորը՝ Իսրայելի «թշնամի» Իրանը նույնպես Ադրբեջանի «ընկերն» է, իսկ Թեհրանը «նրանցից» չէ, որ կներեն Բաքվին նման «դավաճանության» համար:

Ինչ վերաբերում է Իսրայելին, ապա վերջինս զգուշությամբ է նայում Ադրբեջանի «շեղումներին», մասնավորապես նույն Շագալը, մեկնաբանելով Պաղեստինի առաջնորդ Մահմուդ Աբասի Բաքու ստացվող այցը, հայտարարել է. «Մենք Իրանը չենք, որ Ադրբեջանին հարցնենք, թե ինչո՞ւ է «ինչ-որ» մեկին հրավիրում, դա մեր գործը չէ»: Պաղեստինին վերաբերող հարցին պատասխանելիս, այն էլ Բաքվում, թե ինչո՞ւ է հանկարծ Շագալը «հիշում» Իրանին, ավելին՝ համեմատում Իսրայելի հետ, կարծում ենք հասկանալի է. Թել-Ավիվը Բաքվին լուրջ դաշնակից է տեսնում տարածաշրջանում եւ չի պատրաստվում նրան «կիսել» Թեհրանի հետ: Ի դեպ, ադրբեջանա-իրանական «ընկերությունը» նույնպես հետաքրքրական զարգացումներ է ապրում: Վերջերս Իրանը միակողմանի կասեցրեց Ադրբեջանի հետ վիզային ռեժիմը: Իսկ Իսրայելը Բաքվում, իհարկե նույն պայմանավորվածությունը ձեռք բերեց. այսուհետեւ այդ երկրի եւ Ադրբեջանի միջեւ վիզային ռեժիմը կվերանա առայժմ միայն դիվանագիտական անձնագիր ունեցողների համար: Այս ամենը ընդամենն ընդգծում է, որ իսրայելա-ադրբեջանական հարաբերությունները վերջին ժամանակներում լուրջ զարգացումներ են ապրում: Եթե նախկինում դրանք արտահայտվում էին միայն տնտեսական կապերի եւ երկկողմ ծրագրերի տեսքով, ապա այսօր Իսրայելը մուսուլմանական Բաքվին նաեւ քաղաքական եւ ռազմավարական դաշնակից է համարում: Ադրբեջանցի քաղաքագետ **Ռասիմ Մուսաբեկովը** սա պայմանավորում է «երկու ժողովուրդների միջեւ եղած ավանդական բարի հարաբերություններով»: «Ադրբեջանում ապրող հրեաների եւ ադրբեջանցիների միջեւ կրոնների տարբերությունը ոչ մի դեր չի խաղացել ջերմ հարաբերություններ ստեղծելիս», նշել է Մուսաբեկովը: Իսկ եթե ավելի քաղաքական տեսք տանք այս ամենին, ապա Իսրայելի համար շատ կարեւոր են ադրբեջանական ռեսուրսները, իսկ Բաքուն, իհարկե, կարող է օգտագործել Իսրայելին՝ նույն ռեսուրսները արտահանելիս: Ի դեպ, Մուսաբեկովը նաեւ խոսել է իսրայելա-ադրբեջանական խորացող ռազմական շփումներից: «**Ազգ**»-ը փետրվարի 10-ի համարում գրել էր, որ Ադրբեջանը վերածվել է իսրայելական հետախուզական կենտրոնի, ընդ որում դա հաստատում է իսրայելական մամուլը: Բնականաբար ակնհայտ է դառնում, որ Իսրայելն այս տարածաշրջանում զգուշանալու կարիք ունի միայն Ադրբեջանի «մեկ-այլ ընկեր» Իրանից: Հետեւաբար Բաքուն, մտնելով Երեւանի հետ «ո՞վ ավելի շատ ընկեր ունի» խաղի մեջ, բավական երկերեսանի է պահում իրեն. Իսրայելի եւ Իրանի հետ միաժամանակյա ընկերություն անողին հենց այդ որակավորումն արժե տալ, մանավանդ հաշվի առնելով, որ Բաքվի «եղբայր» Թուրքիան նույնպես այնքան էլ «սիրալիր» չի դարձել Թել-Ավիվի նկատմամբ:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Ամերիկացի 10 միսիոներներն ազատ են արձակվել

«**Ազգը**» երեկ հաղորդել էր, որ Հաիթիից 33 երեխաների անօրինական դուրսբերման փորձ անելու ամբաստանությամբ դատվող ամերիկացի բապտիստ 10 միսիոներների գործում զգալի փոփոխություն է կատարվել երեխաների զգալի մասի ծնողների ցուցմունքների պատճառով: Ծնողները մասնավորապես խոստովանել էին, որ իրենց զավակներին իրենք կամավոր հանձնել էին միսիոներներին, որպեսզի երեխաները Դոմինիկյան Հանրապետությունում լավ կրթություն ստանան: Ապագայում ծնողների եւ զավակների տեսակցությունները հնարավոր էին լինելու եւ այլն:

Ռոյթեր գործակալության վերջին տեղեկությունների համաձայն, Հաիթիի դատարանը որոշել է ազատ արձակել ամերիկացի 10 միսիոներներին: Դատարանի վճիռը հիմնավորվում է, որ ամբաստանյալները չար դիտավորություն չեն ունեցել: Ամերիկացիների արձակման մասին պաշտոնապես կհայտարարվի հավանաբար այսօր:

Նախկին ամբաստանյալները Այդահոյի նահանգի բարեգործական կազմակերպություններից մեկի անդամներ են: Հունվարի 29-ին Հաիթիի եւ Դոմինիկյան Հանրապետության սահմանի մոտ նրանց ձերբակալել էին 33 հաիթցի երեխաների դուրսբերումը թույլատրող համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով: Առեւանգման կասկածները, սակայն, անհիմն էին ճանաչվել այդ երեխաների ծնողների խոստովանություններից հետո:

# 30 տարվա բանտարկություն՝ Ուրուգվայի նախկին նախագահին



Ուրուգվայի նախկին նախագահ Խուան Մարիա Բորդաբերին երեկ դատապարտվել է երկրի առավելագույն պատժաչափին՝ 30 տարվա ազատազրկման: Տեղական El Pais թերթը նշում է, որ բանտարկության պատճառը 1971-1976 թթ. նրա կատարած հանցագործություններն են:

Դատարանը նախկին բռնապետին մեղավոր է ճանաչել երկրի սահմանադրության խախտումների, տասնյակ մարդկանց առեւանգումների, ծանրացուցիչ հանգամանքներում կատարված երկու սպանությունների մեջ: Մեղադրանքի երկրորդ ու երրորդ կետերով նա հանդես է գալիս միայն որպես հանցակից:

81-ամյա Բորդաբերիի առողջական վիճակն այնքան էլ լավ չէ: 2006-ից նա տնային կալանքի տակ է:

Նա 1971-ին օրինական կարգով ընտրվել էր նախագահ, բայց երկու տարի անց զինվորականների հետ գործարքի մեջ մտնելով ցրել էր խորհրդարանը եւ արգելել քաղաքական կուսակցությունների գործունեությունը, փաստորեն իրականացնելով պետական հեղաշրջում: 1976-ին զինվորականները նրան զրկել էին իշխանությունից:

Միայն պաշտոնական տվյալների համաձայն, Բորդաբերիի կառավարման ընթացքում ոչնչացվել են 200 ուրուգվայցիներ, գլխավորապես՝ ընդդիմադիր շարժումների ներկայացուցիչներ: Բորդաբերիի վարչակազմն ակտիվորեն մասնակցել է «Կոնդոր» ծրագրի իրագործմանը: 1975-ին լատինաամերիկյան բռնապետական վարչակարգի ձեռնարկած այդ ծրագիրը նախատեսում էր ընդդիմադիրների դեմ պայքար արտերկրում եւ ամեն տեսակի (այդ թվում անօրինական) մեթոդներով:

Բորդաբերին վերջին ամիսներին Ուրուգվայում դատապարտված երկրորդ բռնապետն է: Հոկտեմբերին 25 տարվա բանտարկության էր դատապարտվել գեներալ Գրեգորիո Ալվարեսը, որը երկիրը կառավարել էր 1981-1985 թթ.:

Պ. Ք.

# ԵՄ-ը առաջարկեց Ռուսաստանի արդիականացման ծրագիր

Եվրոմիության փորձագետները ՌԴ իշխանություններին հանձնել են «Գործընկերություն հանուն արդիականացման» ծրագրի նախագիծ: «Կոմերսանտ» թերթի տվյալներով, Եվրոհանձնաժողովը Ռուսաստանից ակնկալում է սեփական տարածքում «օրենքի գերակայության» ապահովում, որից հետո ՌԴ տնտեսությունը պետք է աստիճանաբար անցում կատարի դեպի եվրոպական չափանիշները:

Մոսկվայում ԵՄ ներկայացուցչության եւ Բրյուսելում ՌԴ մշտական ներկայացուցչության աղբյուրների համաձայն, գործընկերության նոր ծրագրի վրա աշխատանք է կատարվում 2009-ի աշնանից: Նոյեմբերին Ստոկհոլմի գագաթաժողովում Եվրոհանձնաժողովի նախագահ **Ժոզե Մանուել Բառոզուն** դրվատել էր Դմիտրի Մեդվեդեւի «Առա՛ջ, Ռուսաստան» հոդվածը եւ ռուսական կողմին օգնություն առաջարկել Ռուսաստանի արդիականացման գործում:

ՌԴ իշխանությունները ցանկություն են հայտնել, որ եվրոպացի գործընկերներն ավելի մեծ տեղ հատկացնեն ոչ թե իրավական պետության թեմային, այլ ՌԴ տնտեսական ու տեխնիկական զարգացմանը:

ԵՄ-ում ՌԴ նախագահի մշտական ներկայացուցիչ **Դմիտրի Չիժովը** մանրամասնել է, որ «խոսքը ոչ թե կողմերից մեկին մյուսի նմանությամբ արդիականացնելու» մասին է, այլ հավասար իրավունքներով իրականացվող գործընկերության մասին:

Ծրագրի կատարման ժամկետները եւ ֆինանսավորման աղբյուրները առայժմ չեն նշվում, բայց ենթադրվում է, որ գործընկերության հաջորդ փուլը կդառնա մայիսին Դոնի Ռոստովում կայանալիք ՌԴ-ԵՄ գագաթաժողովը:

# Աննախադեպ ձյունատեղումներ ԱՄՆ-ի արեւելքում



Վերջին մեկ շաբաթվա ընթացքում ԱՄՆ-ի արեւելյան մասում սկսվել է առատ ձյունատեղումների արդեն երկրորդ փուլը: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ ձնամրրիկը եւ հաստ ձյունածածկույթն արդեն երեք օր է կաթվածահար են արել Վաշինգտոնի կյանքը, չեն գործում կառավարական հիմնարկները: Մեկ օրվա պարապուրդը գնահատվում է մոտ 100 մլն դոլար: Պետհիմնարկները փակ են նաեւ Փենսիլվանիայի, Մերիլենդի եւ Մասաչուսեթսի նահանգներում: Ձնամրրիկի պատճառով Նյու Յորքում չի գործում ՄԱԿ-ի կենտրոնակայանը: Կանխատեսումների համաձայն, ձյան շերտի բարձրությունը Նյու Յորքում կհասնի 36, Բալթիմորում՝ 51, Ֆիլադելֆիայում՝ 48 սանտիմետրի: Ուժգին քամին առաջացրել է էլեկտրամատակարարման խափանումներ: Վաշինգտոնում ավտոբուսներ չեն երթեւեկում, մետրոյի գնացքները շարժվում են միայն ստորգետնյա գծերով: Փակ են դպրոցները, օդանավակայանները: Միայն Վաշինգտոնում եւ Ֆիլադելֆիայում չեղյալ են հայտարարվել հարյուրավոր չվերթեր: Վաշինգտոնում եւ շրջակայքում «վտանգավոր եղանակի» պատճառով ընդհատված է ձյունահավաք տեխնիկայի աշխատանքը: Ավելի վաղ՝ կիրակի օրը, «Դալլաս» միջազգային օդանավակայանում ձյունածածկույթի աննախադեպ հաստությունը կազմել էր 82 սանտիմետր՝ 1996-ի 59 սանտիմետրի դիմաց:

# Google-ը հարյուրապատիկ կարագացնի համացանցի աշխատանքը




Google կորպորացիան մտադիր է փորձնական կարգով ամերիկացիների մի մասի համար ապահովել վայրկյանում 1 գիգաբիթ ինտերնետային արագություն: Դա մոտավորապես 100 անգամ մեծ է ԱՄՆ-ում համացանց մտնելու միջին արագությունից:

Փորձարարության ընթացքում ԱՄՆ-ի 50-500 հազար բնակիչներ կկարողանան ինտերնետ մուտք գործել հատկացված օպտիկական մանրաթելի գծով: Կորպորացիայի ներկայացուցիչները պնդում են, որ համացանցից օգտվելու գները կլինեն մրցունակ:

Google-ի աշխատակիցները հույս ունեն գիգաբիտային կապուղիներին միացած սպառողների օգնությամբ փորձարկել հաջորդ սերնդի վեբ-կցասարքերը: Բացի դրանից, կփորձարկվեն օպտիկամանրաթելային մալուխների անցկացման նոր եղանակներ: Սպառողները կկարողանան ինքնուրույն մատակարար ընտրել մի քանի ընկերություններից:

Ներկայումս Google-ը սկսել է հայտեր ընդունել օպտիկամանրաթելային մալուխների անցկացմամբ շահագրգռված բնակավայրերից: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ հայտերը կարելի է ուղարկել մինչեւ մարտի 26-ը: Մինչեւ տարեվերջ կորպորացիան հրապարակելու է փորձարարության շրջանների ցանկը:

AZG NEW PDF.qxd 2/11/2010 10:02 PM Page 1



# Զգացական մի կապ` մի ազգի անցյալին

## Հայ կոմպոզիտորի զորեղ երաժշտությունը իրար է բերում գործընկերների եռյակին

*Տիգրան Մանսուրյանն ու Քիմ Քաշքաշյանը, երկուսն էլ` ծագումով հայ, նշում են ավելի քան երկու տասնյակ տարվա համագործակցություն:*

Ալտիստ Քիմ Քաշքաշյանը բազում նշանակալից կոմպոզիտորների մուսան է եղել, ի թիվս շատ ուրիշների, Լուչիանո Բերիոյի, Գեորգի Կուրտագի եւ Արվո Պյարտի հետ է աշխատել եւ նոր գործեր «բխեցրել» նրանցից: Բայց Տիգրան Մանսուրյանի հետ իր կապն ուրիշ է: Նրանք իրենց ավելի քան երկտասնամյա համագործակցությունը նշում են հայկական համերգների հազվագյուտ մի շարքով` հարվածային գործիքներ նվագող Ռոբին Շուլկովսկու հետ: Այս կարճատեւ շրջագայությունը, որի ընթացքում Մանսուրյանը դաշնամուր կնվագի ու կերգի, սկսում է չորեքշաբթի օրը Ջորդան Հոլում: Համերգի հայտագիրը ներառում է Մանսուրյանի երաժշտությունը, ինչպես նաեւ նրա մշակումները Կոմիտաս Վարդապետի գործերի, այն կոմպոզիտոր-երաժշտագետի, ով լայն շրջանակներում համարվում է առանցքային դեմք հայկական դասական երաժշտության մեջ: Մինչեւ 1915 թ. իր ձերբակալվելն ու աքսորվելը Կոմիտասը տարիներ շարունակ շրջել է գյուղական շրջաններում, ձայնագրել եւ մշակել է իր լսած հազարավոր ժողովրդական ու հոգեւոր երգերը: Թե՛ Քաշքաշյանը, թե՛ Մանսուրյանը հայկական ծագում ունեն, եւ ա՛յս երգերն են` մի անգնահատելի կապ երկրի անցյալին, որ միացրել են նրանց:

Մեր հեռախոսազրույցի ընթացքում Քաշքաշյանը վերհիշեց 1980-ականների վերջերին իր` Կոմիտասի երգերի մշակումներ նվագելը. ինչպես ինքն է ասում` «նրանց հանդեպ քիչ թե շատ բնազդային մոտեցում տենելու» համար նա ճամփորդում է Հայաստան, որ լսի Մանսուրյանի` այդ երգերը նվագելն ու երգելը: Հանդիպումը փոխեց ամեն ինչ, առանցքային դարձավ:

- Ես անչափ հմայված էի իր արածով,- ասում է նա:- Այնքան հզոր էր, այնքան հուժկու, որ այդ դրվագից մի փոքրիկ ձայներիզային ձայնագրություն հետս բերեցի Մյունխեն (ECM Records-ի` Քաշքաշյանի երաժշտությունը թողարկող ընկերության նստավայրը):

Այնտեղ նա միացրեց այդ ձայնագրությունը, որ լսեն իր պաշտոնակիցներից Մանֆրեդ Այխերը` ECM-ի հիմնադիրը, եւ Շուլկովսկին, ում հետ Քաշքաշյանը հաճախ էր աշխատում:

- Ու նստել էինք մենք երեքով, մեր աչքերին` արցունք,- վերհիշում է ալտահարը:- Որովհետեւ այնքան զգայացունց էր, մեզ համար ե՛ւ մտերմիկ, ե՛ւ հզոր, ե՛ւ եզակի: Ու այդ պահին մենք ասացինք` սրանով մի բան պետք է անենք:

Արդյունքը 2003 թ. «Հայրեն» անվանումով ձայնապնակն էր. այնտեղ եռյակը նվագում է Կոմիտասի երգերի մշակումներից ու Մանսուրյանի հեղինակած գործերից: Ձայնագրությունում Մանսուրյանի ձայնը հնչում է անմշակ ու համարյա ցավագնորեն կաշկանդված` արհեստավարժ մի երգչից ձեր ակնկալածից տարբեր մի ամբողջ աշխարհ: Այնքան անսովոր է, որ ծրագրում դա բնորոշվում է ոչ թէ «երգեցողություն», այլ «վոկալ»: «Բայց հմայքը», ասում է Քաշքաշյանը, «ուրի՛շ բանի մեջ է»:

- Այդ անմշակությունը, որ դուք լսում եք, ու այդ չմարզվածի որակը իրականում թափանցում են անհավատալի խորությունը զգացմունքի ու գիտելիքի` ժողովրդի մասին, հողի մասին, ազգի հանգամանքների, իրավիճակի մասին. դա արյունն է,- ասում է նա:- Իսկապես կարծում եմ, որ սա մի բան է, որ պետք է անպայման ունկնդրել:

Կոմիտասի արածը հնագույն անցյալը բերելն էր մի ձեւի մեջ, որն արդի հայերը (նաեւ արեւմուտքցիները) կարող էին հասկանալ ու որդեգրել: Ինչ որ ձեւով, ասում է Քաշքաշյանը, Մանսուրյանի՛ երաժշտությունը նույն բանն է անում:

- Մենք իր մասին խոսում ենք իբրեւ ժամանակակից, եվրոպական կրթությամբ կոմպոզիտորի, որն իր տրամադրության տակ այդ բոլոր հնարներն ունի,- բացատրում է նա:- Բայց իր մասին խոսում ենք նաեւ իբրեւ իր արմատներն անցյալի հայ եկեղեցական եւ ժողովրդական երաժշտության մեջ ունեցողի: Ուրեմն, երբ Տիգրանի մի գործն եմ լսում, այս երկուսը ընկալում եմ: Դա իր ամբողջ երաժշտության ընդմիջեն անցնող կարմիր թելի նման է:

Երեքշաբթի օրվա համերգն սկսում է երեք տաղով` հնագույն հոգեւոր երգեր, որոնք Մանսուրյանը ձեւել է ալտի ու հարվածայինների համար: Ծրագրի մեջ է նաեւ կոմիտասյան երգերի երկու շարք, չորսը` Մանսուրյանի, իսկ երգերից` փոխադրած ալտի ու դաշնամուրի համար, եւ ծավալուն մի դուետ` Քաշքաշյանի ու Շուլկովսկու համար:



- Տեսեք, թե ինչպես ամեն ինչ սնվում է ամեն ինչից,- ասում է Քաշքաշյանը:- Դուք անպայման կզգաք ազգի համն ու հոտը, բնաշխարհի (թե՛ հուզական, թե՛ ֆիզիկական) համն ու հոտը այս բոլոր գործերում` թե՛ երկու տարի առաջ գրվածներում, թե՛ երկու դար առաջ գրվածներում:

Եթե այդպես է, դրա համար պարտական ենք ոչ միայն Կոմիտասին ու Մանսուրյանին, այլ նաեւ Քաշքաշյանի յուրահատուկ ձայնին: Իր կարիերայի ընթացքում նա ամենաներհակ լարային գործիքից ստեղծել է արտասովոր կերպով արտահայտիչ մի տոն` ստվերոտ, բայց եւ այնքան քնարական: Դա հատկապես բացահայտ է դարձել իր երկու վերջին ձայնապնակներում. «Աստուրիանա»-ն (2007) երգերի փոխադրումների մի շարք է Ռոբերտ Լեւինի հետ, իսկ «Նեհարոթ»-ը նվագախմբային ու կամերային երաժշտության այլազան, մռայլորեն գեղեցիկ մի հավաքածու է:

Երբ իր տոնի մասին ենք հարց տալիս Քաշքաշյանին, նա սխալվելու աստիճան համեստ է ու գերադասում է իր բացատրությունը կերտել ընդհանուր եզրերով.

- Բոլոր երաժիշտների փորձածը իրենց առաջարկված արտահայտիչ գործիքը վերցնել ու մի բան ասելն է, մի բան, որը, մի կողմից, ինչքան հնարավոր է` հարազատ է կոմպոզիտորին եւ մյուս կողմից` արտահայտում է իրենց իսկ սրտերի ամենախորունկ, ամենաներքին ծալքերը: Ուղղակի ահագին առարկայականություն ու անհավատալի չափի փխրունություն ու քաջություն է պահանջում այդ բացվելը, ինքդ քեզ բաց թողնելը: Ու այս երկուսը միասին անելն ու միաժամանակ որոշ չափով ճշմարտություն պահպանելը հեշտ բան չէ: Բայց, կարծում եմ, բոլորս սրան ենք ձգտում:

ԴԱՎԻԹ ՈՒԱՅՆԻՆԳԵՐ
«Բոստոն գլոբ»

ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

# «ARTEXPO-2010»-ը` այսօր եւ վաղը

Երեկ ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը** ներկայացրեց նկարիչների միության սրահներում բացվող «ARTEXPO-2010» արվեստների ցուցահանդեսի մանրամասները: Արդեն երկրորդ տարին է, ինչ նախարարությունը ընտրել է հաշվետվության յուրօրինակ ձեւ. մշակութային ամենատարբեր կազմակերպություններ եւ կառույցներ (լինեն դրանք ՀԿ-ներ, թե պետական կառույցներ) մեկ հարկի տակ, կողք-կողքի ներկայացնում են արվեստի տարբեր ոլորտների նախորդ տարվա իրենց կատարած աշխատանքները, ձեռքբերումներն ու ծրագրերը, անում առաջարկներ: Նախորդ տարվա ցուցահանդեսին մասնակիցների երկու տասնյակի փոխարեն, այս տարի փետրվարի 12-ին եւ 13-ին կներկայացվեն հինգ տասնյակը գերազանցող մշակութային կազմակերպությունների տաղավարները: Իսկ նման ARTEXPO-ի նպատակը մեկն է, նշեց Հասմիկ Պողոսյանը. «Ներկայացնել հայրենական մշակույթի ժամանակակից զարգացումները, համագործակցություն, գործնական կապեր հաստատելու հնարավորություն ընձեռել մշակույթի դաշտում գործունեություն ծավալող բոլոր շահագրգիռ կազմակերպություններին ու կառույցներին»:

Մշակութային ցուցահանդեսի երկու օրերի ընթացքում կցուցադրվեն TV-ների պատրաստած 27 մշակութային ֆիլմեր, կգործի ստեղծագործական սրճարանը, որտեղ լայն քննարկումներ կկայանան: Այս տարի առաջին անգամ ցուցահանդեսին ներկա կլինեն պատվավոր հյուրեր, ովքեր այցելուներին կներկայացնեն իրենց ստեղծագործությունները, կանցկացնեն վարպետության դասընթացներ: Առաջին հյուրը ՌԴ-ից



անվանի պրոդյուսեր եւ սցենարիստ Սաիդա Մամեդովան է, որին կինոսիրողները ճանաչում են «Ջուր», «Բորբոս», «Մահվան գաղտնիքները», «Սիրո գաղտնիքները», «Զգուշացե՛ք, սնունդ» փաստավավերագրական ֆիլմերից: Ցուցահանդեսի երկու օրերի ընթացքում առանձին շնորհանդեսային ծրագրերով կներկայանան 19 մշակութային կազմակերպություններ, թանգարաններ, թատրոններ, գրահրատարակչություններ եւ այլն: Առաջին անգամ նախարարությունն այս ցուցահանդեսի շրջանակներում սահմանել է 3 մրցանակ` տաղավարների լավագույն ձեւավորման համար, որոնց հաղթողները կորոշվեն նաեւ լրատվամիջոցների հրապարակումների արդյունքում:

Պատասխանելով **«Ազգի»** հարցին, նախարարը նշեց, որ անցած տարվա մշակութային անդրանիկ ցուցահանդեսը նոր համագործակցության ծրագրերի առաջարկներ ստացավ մեր երկրում հավատարմագրված դեսպաններից, որի վառ ապացույցն էր բազմաթիվ փառատոներին մեր երկրի մասնակցությունը, նաեւ օտարերկրյա հայտնի խմբերի, անհատների համերգները, փառատոները Հայաստանում:

Ամփոփելով, նախարարը տեղեկացրեց, որ փետրվարին Տրետյակովսկու թանգարանում կբացվի Մարտիրոս Սարյանի կտավների ցուցադրությունը, իսկ հունիսին Երեւանում կկայանա «Աիդա» օպերայի առաջնախաղը, որը բեմադրելու համար հրավիրվել է իտալացի աշխարհահռչակ ռեժիսոր Կորատին եւ Հասմիկ Պապյանը, որին վստահվել է Աիդայի դերերգը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Արվեստին նվիրված փայտագործների թիվն օրեցօր նվազում է

Հայաստանը, լինելով փայտանյութով ոչ հարուստ երկիր, այնուամենայնիվ կարողացել է ձեւավորել փայտարվեստի ազգային ավանդույթներ: Փայտարվեստի մոռացված ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը մեծապես նպաստել է Փայտարվեստի պետական թանգարանը: Քչերը գիտեն, որ Պարոնյան 2 եւ 4 հասցեում տեղակայված այս թանգարանն առայսօր հավատարիմ է մնացել ի սկզբանե ընտրած իր ուղուն: Փայտարվեստի թանգարանն ունի ցուցադրությունների 3 բաժին` հնագույն մշակույթի, քանդակի եւ կիրառական արվեստի : Վերջին երկու բաժինները ներկայացնում են ժամանակակից վարպետների աշխատանքները, որոնք ներկայումս թանգարանը մեծ դժվարությամբ է ձեռք բերում:



«Այսօր փայտագործների աշխատանքը պայմանավորում է շուկան, կան հրաշալի վարպետներ, ովքեր շուկայի պահանջներից ելնելով, փոխել են իրենց ոճը, հիմա բարձրարժեք արվեստի գործեր գտնելը շատ դժվար է դարձել, որովհետեւ արվեստին նվիրված փայտագործներ քիչ են մնացել», -ասում է Փայտարվեստի թանգարանի գլխավոր ֆոնդապահ **Մելանյա Միրզոյանը**:

Այս թանգարանի առանձնահատկություններից է այն, որ քանդակագործների, նկարիչների, ճարտարապետների փայտյա ստեղծագործությունները ցուցադրվում են միասին: Փայտյա նմուշներն իրենց մեջ ամբողջացնում է տարբեր արվեստներին բնորոշ հատկանիշները: Դրանք այցելուներին գրավում են իրենց կատարման բարձր վարպետությամբ, սիմվոլիկայով, գաղափարի ու կերպարի միասնությամբ:



Ըստ Մելանյա Միրզոյանի` թանգարանը փայտագործության հին նմուշներ ձեռք է բերում անհատներից, օրինակ, կարող է դրված լինել սեւ շուկայում, վերնիսաժում եւ երբեմն պատահում է, որ վաճառողն էլ չի հիշում, թե դա ո՞նց է հայտնվել իր ձեռքի տակ: Թանգարանը պարբերաբար կազմակերպում է թեմատիկ ու հեղինակային ցուցահանդեսներ, ինչպես նաեւ թարմացնում մշտական ցուցադրությունները:

«Մենք իրականացնում ենք նաեւ կրթական-ուսուցողական ծրագրեր, օրինակ, աշխատում ենք տարբեր մարզերի պատանեկան ակումբների հետ: Թանգարանի աշխատակիցները գնում են մարզեր , եւ այնտեղ պատանիների հետ անցկացնում կարպետագործության, փայտագործության, խեցեգործության դասընթացներ»,- պատմում է Մելանյա Միրզոյանը:

Արդեն պատրաստ է թանգարանի այս տարվա ցուցադրությունների ծրագիրը: Առաջիկայում լինելուեն հետեւյալ ցուցադրությունները.

մարտի 5-ին` երաժշտական փողային եւ լարային փայտե գործիքների ցուցադրություն

մայիսի 18-ին` փայտե փորագիր դռների ցուցադրություն

հուլիսի 9-ին կներկայացվեն փայտագործության հին գործիքների հավաքածուն

օգոստոսի 14-ին` Գրիգոր Բայբուրտցյանի փայտյա աշխատանքների ցուցադրություն:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 2/11/2010 10:01 PM Page 1



# «Աերոֆլոտում» էլ Շահինյանը վերելքով է խաղում

Շախմատի «Աերոֆլոտի» մրցաշարում էլ իր հաղթարշավն է շարունակում 16-ամյա Դավիթ Շահինյանը: «C» խմբի մրցաշարում նա 2-րդ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Վալերիա Ռյանովային: Դավիթը 11 շախմատիստների հետ 2 միավորով գլխավորում է աղյուսակը: Նրանց թվում է նաեւ Լեւոն Քարամյանը, որն առավելության հասավ ռուսաստանցի Հենրիխ Ազիզյանի նկատմամբ: 1,5 միավոր ունի Աշոտ Ավետիսյանը, որը ոչ-ոքի խաղաց Յան Շենգի հետ: Առաջին հաղթանակը տոնեց Մարկ Բասենջյանը՝ պարտության մատնելով Լեւ Լուկովսկուն: Նա Հենրիկ Փաշայանի, Հայկ Գալստյանի եւ Տիգրան Հարությունյանի հետ վաստակել է 1 միավոր: Վերջիններս 2-րդ տուրում պարտվեցին:



A1 մրցաշարում հանդես եկող հայաստանցի շախմատիստներից միակ հաղթանակը տոնեց Հրանտ Մելքումյանը՝ առավելության հասնելով ռուսաստանցի գրոսմայստեր Ալեքսեյ Դրեեւի նկատմամբ: Մոտիլյով-Փաշիկյան, Վոլոկիտին-Անդրեասյան, Սարգսյան-Խայրուլին պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Փաշիկյանն ու Մելքումյանն ունեն 1,5-ական, Սարգսյանն ու Անդրեասյանը՝ մեկական միավոր: 2-ական միավորով աղյուսակը գլխավորում են չինացի Բու Քսյանչին եւ վիետնամցի Լե Քուանգը:

A2 մրցաշարում 1,5 միավորով առաջատարներին հետապնդում է Դավիթ Պետրոսյանը, որ ոչ-ոքի խաղաց վիետնամցի Նգուեն Վանի հետ: Տիգրան Քոթանջյանը հաշտություն կնքելով իսրայելցի Յակով Զիլբերմանի հետ, վաստակեց 1 միավոր: Հաջող է խաղում ռուսաստանցի Արթուր Գաբրիելյանը, որը հաղթելով Լեոնիդ Գերզոյին, վաստակած 2 միավորով Իգոր Գլեկի, Միխայիլ Մոչարովի, Եվգենի Պոդոլչենկոյի եւ Վլադիմիր Բելոուսի հետ գլխավորում է աղյուսակը: ԱՄՆ-ը ներկայացնող Մելիքսեթ Խաչիյանը ոչ-ոքի խաղաց թուրք Էմրե Կանի հետ ու վաստակեց մեկ միավոր:

«B» խմբի մրցաշարում 3 տուրից հետո Տիգրան Սիմոնյանը 2,5 միավորով առաջատարների թվում է: Նա հաղթեց Նիկոլայ Նազարովին եւ ոչ-ոքի խաղաց Արկադի Շեւելեւի հետ: Հայաստանի մյուս ներկայացուցիչը՝ Դավիթ Գեւորգյանը կես միավոր ունի: Աղյուսակը 3-ական միավորով գլխավորում են Ալեքսանդր Ֆիլիպենկոն, Զիա Հաոքույանգը եւ Լի Հանբինը:

# Սլովակների առաջին լուրջ հաջողությունը

***Ֆուտբոլի 2012-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի մեկնարկը կտրվի սեպտեմբերին: Հավաքականները բավական ժամանակ ունեն միմյանց հնարավորություններին ծանոթանալու եւ նախապատրաստվելու համար: Մենք պարբերաբար կանդրադառնանք ընտրական «B» խմբում Հայաստանի հավաքականի մրցակիցներին: Այսօր ներկայացնում ենք Սլովակիայի ընտրանուն:***

Սլովակիայի ընտրանին մեր մրցակիցներից միակն է, որը հանդես է գալու ամռանը Հարավաֆրիկյան Հանրապետությունում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնությունում: Ընտրական մրցաշարում սլովակները գրավեցին 1-ին տեղը՝ գերազանցելով Սլովենիայի, Չեխիայի եւ Լեհաստանի հավաքականներին: Աշխարհի առաջնության խմբային մրցաշարում Սլովակիայի հավաքականը կմրցի Իտալիայի, Պարագվայի եւ Նոր Զելանդիայի ընտրանիների հետ: Աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճելն առայժմ սլովակների ամենամեծ հաջողությունն է:

Սլովակիայի հավաքականի նոր կենսագրությունը սկսվում է 1994-ի ապրիլի 20-ից խորվաթների հետ ընկերական հանդիպումով: Թեեւ 1939-44-ին ֆաշիստական Գերմանիայի տիրապետության տակ գոյատեւում էր Սլովակիայի առանձին հանրապետությունը: 1944-ի ապրիլի 9-ին սլովակները վերջին խաղն անցկացրին խորվաթների հետ (3-7), իսկ 2-րդ Համաշխարհային պատերազմից հետո կրկին մտան Չեխոսլովակիայի կազմի մեջ: Թեեւ Չեխոսլովակիայի հավաքականում մարզիչները սովորաբար նախապատվությունը տալիս էին չեխերին, սակայն 1962-ի աշխարհի եւ 1976-ի Եվրոպայի առաջնություններում սլովակները գերակշռում էին: Այնպես որ սլովակ ֆուտբոլիստները միջազգային մրցաշարերի մասնակցության զգալի փորձ ունեն:

Սլովակիայի ազգային հավաքականի առաջին մարզիչն անվանի մասնագետ Յոզեֆ Վենգլոշն էր, որի գլխավորությամբ 1990-ի աշխարհի առաջնությունում Չեխոսլովակիայի հավաքականը հասել էր մինչեւ քառորդ եզրափակիչ: Ինչպես Հայաստանի հավաքականը, սլովակներն էլ ընտրական մրցաշարերին մասնակցում են 1994-ից: 1996-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում նրանք 3-րդն էին Ռումինիայի եւ Ֆրանսիայի հավաքականներից հետո: Հաջորդ երկու մրցաշարերում Սլովակիայի ընտրանին կրկին 3-րդ տեղը զբաղեցրեց: 2000-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում սլովակներին գերազանցեցին ռումինացիներն ու պորտուգալացիները, 4 տարի անց՝ Անգլիայի եւ Թուրքիայի հավաքականները: Իսկ 2008-ին նրանք արդեն 4-րդն էին:

Սլովակներն ավելի հաջող են հանդես եկել աշխարհի առաջնությունների ընտրական մրցաշարերում:



2006-ի ընտրական մրցաշարում Դուշան Գալիսի գլխավորությամբ սլովակները 12 հանդիպումներում միայն մեկ պարտություն կրեցին՝ Լիսաբոնում զիջելով Եվրոպայի փոխչեմպիոն պորտուգալացիներին: Ընտրական մրցաշարի ավարտական խաղում ոչ-ոքի (0-0) խաղալով ռուսների հետ, Սլովակիայի ընտրանին խմբում գրավեց 2-րդ տեղը: Սակայն արդեն անցումային առաջին խաղում, Մադրիդում 1-5 հաշվով պարտվելով իսպանացիներին, սլովակները զրկվեցին աշխարհի առաջնության ուղեգիր նվաճելու հնարավորությունից:

45-ամյա Վլադիմիր Վայսը Սլովակիայի ամենահաջողակ մարզիչներից մեկն է: 2008-ին գլխավորելով ազգային հավաքականը, նա սլովակներին աշխարհի առաջնության ուղեգիր պարգեւեց: 1990-ին Վայսը Չեխոսլովակիայի հավաքականի կազմում մասնակցել էր ֆուտբոլի աշխարհի առաջնությանը: Նա հասցրել է հանդես գալ նաեւ Սլովակիայի ընտրանում: 1996-ից նա գլխավորում էր «Արտմեդիան», որը երկու անգամ նվաճեց երկրի չեմպիոնի տիտղոսը, մտավ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշար, որտեղ 5-0 հաշվով ջախջախեց շոտլանդական «Սելթիկին»: 1,5 տարի աշխատելով մերձմոսկովյան «Սատուռնում», Վայսը վերադարձավ հարազատ ակումբ ու կրկին «Արտմեդիային» չեմպիոնական բարձունքին հասցրեց:

Այնուհետեւ Վայսին հրավիրեցին հավաքական, որում ներկայումս խաղում է նրա որդին՝ 19-ամյա Վլադիմիր Վայս-կրտսերը: Նա հանդես է գալիս անգլիական «Մանչեսթր Սիթիում»: Հավաքականի ներկայիս կազմում խաղում են մի խումբ հայտնի ֆուտբոլիստներ: Առանցքային խաղացողներից մեկը 25-ամյա պաշտպան Մարտին Շկրտելն է, որը 2008-ին «Զենիթից» տեղափոխվեց «Լիվերպուլ»: Գերմանական «Բոխումի» 27-ամյա հարձակվող Ստանիսլավ Շեստակը 6 գնդակով Սլովակիայի հավաքականի ռմբարկուն էր ընտրական մրցախաղերում: Կարելի է առանձնացնել նաեւ Յան Դյուրիցային ու Ռադոսլավ Զաբավնիկին: Իսկ 33-ամյա կիսապաշտպան Միրոսլավ Կարգանը, որ հանդես է գալիս գերմանական «Մայնցում», անցկացրած խաղերի քանակով հավաքականի ռեկորդակիրն է (95 խաղ): Ճիշտ է, նա հիմնականում փոխարինման է դուրս գալիս: Սլովակիայի հավաքականի լավագույն ռմբարկուն Սիլարդ Նեմետն է, որը 1997-2006-ին անցկացրած 57 խաղում 22 գոլ է խփել: Հավաքականը սեփական հարկի տակ հանդիպումներն անցկացնում է Բրատիսլավայի «Տեգելնե Պոլե» մարզադաշտում, որը նախատեսված է 30 հազար հանդիսականի համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆ

# Միխիթարյանը «Մետալուրգին» փրկեց պարտությունից

Իսպանիայում առաջին ստուգողական հանդիպումը Դոնեցկի «Մետալուրգն» անցկացրեց Մարբելիա քաղաքում՝ ուժերը չափելով Մոսկվայի «Լոկոմոտիվի» հետ: Այս խաղում էլ «Մետալուրգի» մեկնարկային կազմում էր Հենրիխ Միխիթարյանը, որն աչքի ընկավ ակտիվ գործողություններով: Առաջին խաղակեսում նա երկու անգամ սպառնաց «Լոկոմոտիվի» դարպասին: 26-րդ րոպեին խաբս տալով մրցակցի երեք պաշտպաններին, Հենրիխը մտավ տուգանային հրապարակ ու գնդակն ուղարկեց դարպասը: «Լոկոմոտիվի» դարպասապահ Գիլերմեն մեծ դժվարությամբ գնդակը հանեց անկյունային: 40-րդ րոպեին էլ սուր անկյան տակ Միխիթարյանի հարվածը հրաշքով հետ մղեց դարպասապահը:



Առաջին խաղակեսի վերջին րոպեին Տրաորեն «Լոկոմոտիվին» հաշվի մեջ առաջ մղեց: Սակայն 1-0 հաշիվը երկար չպահպանվեց: 66-րդ րոպեին գեղեցիկ գոլի հեղինակ դարձավ Միխիթարյանը: Սարտեսից փոխանցում ստանալով, նա խաբս տվեց Կուզմինին եւ ընթացքից գնդակն ուղարկեց դարպասի անկյունը՝ փրկելով «Մետալուրգին» պարտությունից: 1-1 հաշիվը պահպանվեց մինչեւ խաղի ավարտը: 88-րդ րոպեին «Մետալուրգի» կազմում խաղադաշտ մտավ Արտակ Դաշյանը՝ փոխարինելով Պրիյմային:

# Հավաքականների կազմը վերջնական տեսք ստացավ

Շախմատի Հայաստանի առաջնությունն անվանեց ոչ միայն նոր չեմպիոններին, այլեւ վերջնական տեսքի բերեց մարզաձեւի հավաքականները, որոնք աշնանը կմասնակցեն համաշխարհային օլիմպիադային:

Եվ այսպես, Հայաստանի տղամարդկանց հավաքականն օլիմպիադային կներկայանա հետեւյալ կազմով. Լեւոն Արոնյան, Վլադիմիր Հակոբյան, Գաբրիել Սարգսյան, Արման Փաշիկյան, Ավետիք Գրիգորյան: Կանանց հավաքականում հանդես կգան Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը, Լիլիթ Գալոյանը, Նելլի Աղինյանը եւ Անահիտ Խառասյանը:

# Մեյվեզերն ու Մոզլին պայմանագիր կնքեցին

Աշխարհի վեցակի չեմպիոն Ֆլոյդ Մեյվեզերն ու իր տիտղոսները 5 անգամ հաջողությամբ պաշտպանած Շեյն Մոզլին պայմանագիր են կնքել մայիսի 1-ին Լաս Վեգասում մենամարտելու վերաբերյալ: Երկու բռնցքամարտիկներն էլ համաձայնել են դոպինգ ստուգման ենթարկվել նոր կարգով: Հիշեցնենք, որ 2003-ին Մոզլիին մեղադրում էին այն բանում, որ նա միտումնավոր էր օգտագործել BALCO ֆիրմայի խթանիչները: Այնինչ Մոզլին մշտապես հայտարարում էր, որ ինքը տեղյակ չի եղել, որ դրանք արգելված են եղել ու պատրաստ է ցանկացած պահի անալիզներ հանձնել:

Կիսամիջին քաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոն, 38-ամյա Շեյն Մոզլին հետեւյալ կարծիքն է արտահայտել առաջիկա մենամարտի մասին. «Մշտապես ցանկացել եմ մենամարտել Ֆլոյդի հետ եւ վերջապես դա տեղի կունենա: Ռինգում հանդիպել եմ մի շարք արագաշարժ բռնցքամարտիկների հետ: Չեմ կարծում, թե Մեյվեզերը նման հանդիպումների մեծ փորձ ունի: Կարծում եմ, նրա համար անակնկալ կլինի հանդիպել մի բռնցքամարտիկի հետ, որն իրեն չի զիջի արագաշարժությամբ եւ կգերազանցի ֆիզիկական տվյալներով: Ես արդեն գերազանց մարզավիճակում եմ եւ պատրաստ եմ բոլորին ցույց տալ, որ նրանից ավելի ուժեղ ու արագ եմ: Նրա հետ մենամարտում խնդիրներ չեն ծագի»:

«Ես ասում էի, որ ռինգ վերադառնալով, ցանկանում եմ մենամարտել ուժեղ բռնցքամարտիկների հետ: Ուստի խնդրեցի մենամարտ կազմակերպել Շեյն Մոզլիի հետ: Կարծում եմ, որ նա լավագույններից մեկն է: Սակայն մայիսի 1-ին դա բավարար չի լինի, որպեսզի հաղթի ինձ», հայտարարել է Մեյվեզերը:

# Կորեացիները չեն միավորվի շքերթի ժամանակ

Վանկուվերի ձմեռային օլիմպիական խաղերի բացման արարողության ժամանակ ԿԺԴՀ-ի եւ Կորեայի մարզիկները շքերթին չեն մասնակցի միասնական դրոշի ներքո, ինչպես դա տեղի էր ունեցել 2000-ին՝ Սիդնեյում, 2004-ին՝ Աթենքում եւ 2006-ին՝ Թուրինում: Ինչպես 2008-ի Պեկինի օլիմպիադայում, Վանկուվերում էլ այդ երկրների պատվիրակություններն առանձին կքայլեն: Նշենք, որ Կանադա են ժամանել 46 մարզիկներ Կորեայից, իսկ ԿԺԴՀ-ից մրցումներին կմասնակցի միայն 2 մարզիկ:

# Առաջինը «Սեւիլիան» է

Հայտնի դարձավ Իսպանիայի ֆուտբոլի գավաթի եզրափակիչի առաջին մասնակիցը: «Սեւիլիայի» ֆուտբոլիստները թեեւ 0-1 հաշվով պարտվեցին «Խետաֆեին», սակայն շնորհիվ առաջին խաղում տոնած հաղթանակի (2-0), մտան եզրափակիչ: «Սեւիլիայի» մրցակիցը հայտնի կդառնա «Ռասինգ»-«Ատլետիկո» մրցախաղում:

# Լեգենդար թենիսիստները կհանդիպեն Մոսկվայում

Փետրվարի 27-28-ին Մոսկվայի «Լուժնիկի» մարզահամալիրի փոքր մարզասրահում կանցկացվի «Թենիսի լեգենդները Մոսկվայում» անվանումը ստացած միջազգային մրցաշարը: Մոսկվա կժամանեն 2001-ի Ուիմբլդոնի մրցաշարի չեմպիոն, 21 մրցաշարերի հաղթող Գորան Իվանիշեւիչը, 1992-1993-ի Ավստրալիայի բաց առաջնության դափնեկիր, 1992-ի թենիսիստների դասակարգման առաջատար Ջիմ Կուրյեն, 1996-ի Ատլանտայի օլիմպիական խաղերի արծաթե մրցանակակիր Սերխի Բրուգերան: Ռուսաստանի թիմի կազմում կորտ դուրս կգան Եվգենի Կաֆելնիկովը, Մարատ Սաֆինն ու Անդրեյ Չեսնոկովը:

Մրցումների առաջին օրը տեղի կունենան երկու մենախաղեր, հաջորդ օրը կանցկացվեն եւս երկու մենախաղեր, ինչպես նաեւ զուգախաղ: Բացի այդ, անվանի թենիսիստները բաց մարզում կանցկացնեն սկսնակ թենիսիստների հետ, կկազմակերպվեն տարբեր մրցույթներ հանդիսականների համար:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 2/11/2010 10:07 PM Page 1



# Նորակառույց որոշ շենքերի սեյսմակայունությունը ապահովված չէ

Երեկ լրագրողների հետ հանդիպեց «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության» պետ **Ալվարո Անտոնյանը** եւ ներկայացրեց հանրապետությունում սեյսմիկ իրավիճակը: Փետրվարի 3-ին եւ 9-ին Աշոցքում տեղի ունեցած երկրաշարժերը անհանգստության ալիք էին բարձրացրել բնակչության մոտ: Խմբագրություն էին զանգահարում «**Ազգի**» ընթերցողները ու խնդրում պարզաբանել, թե եղանակի տաքացումնե՞րն են երկրաշարժերի պատճառը: Այդ հարցը «**Ազգը**» տվեց պրն Անտոնյանին: «Այդ հարցը այսօր շատերին է մտահոգում, եւ մեզ էլ են հաճախ դիմում,- ասաց մասնագետը,-եղանակն ընդհանրապես գործնականորեն կապ չունի այն գործընթացների հետ, որոնք բերում են երկրաշարժերի: Հայաստանի տարածքում երկրաշարժերի օջախները գտնվում են երկրակեղեւում` 5-20 կմ խորության վրա եւ բնականաբար մթնոլորտային ջերմաստիճանը կամ պայմանները չեն կարող հասնել երկրաշարժերի գոտուն եւ նպաստել ու ազդել դրանց առաջացմանը: Արդեն երկու տարի է, ինչ ստեղծվել է Արտակարգ իրավիճակների նախարարությունը, որում ընդգրկվել են նաեւ շրջակա միջավայրի մոնիտորինգով զբաղվող կազմակերպությունները ու օղակները»:

Պրն Անտոնյանը նշեց, որ առաջիկա 2 ամիսներին ուժեղ երկրաշարժեր չեն սպասվում եւ շեշտեց. «Մեր հանրապետության տարածքում երկրաշարժեր մշտապես եղել են եւ կլինեն, բայց ոչ այնքան ուժգին, ինչպես Սպիտակի երկրաշարժն էր 1988-ին»: Նա նշեց, որ մասնագետները զբաղվում են օդերեւութաբանական տեղեկատվության վերլուծությամբ` գետերի ջրերի հոսք, լճեր եւ այլն: Եվ արդյունքում նրանք հանգել են եզրակացության, որ Սեւանա լճի ջրի մակարդակը կարող է ինչ-որ չափով կապ ունենալ սեյսմիկության հետ:

Իսկ այն հարցին կարելի՞ է արհեստական երկրաշարժ հարուցել, պրն Անտոնյանն ասաց. «Գործնականորեն ոչ, բայց տեսականորեն, եթե երկրաշարժը պատրաստվել է, այսինքն` կուտակվել է այնքան էներգիա, որ հասել է կրիտիկական սահմանին եւ եթե մենք լրացուցիչ ինչ-որ ճնշում, ուժ գործադրենք, կարող է երկրաշարժ սկսվել: Այդ ուժը կարող է լինել մեծ ջրամբարներից ջրի արագ դատարկումը, կամ լցնումը: Ճնշումը երկրակեղեւի վրա այդ մասում փոխվում է, փոքրանում: Իսկ Սեւանա լիճն իր ծավալով շատ մեծ է, եւ մակարդակը փոխվելուց, փոխվում են նաեւ լճի հատակի, այսինքն երկրակեղեւի այդ տարածքի վրա», բացատրեց պրն Անտոնյանն ու ավելացրեց, որ այդ հարցը նույնպես ուսումնասիրվում է մասնագետների կողմից:

2009-ին նախորդ տարվա համեմատ, երկրաշարժերի քանակը աճել է, նշեց մասնագետն ու ավելացրեց. «Այստեղ կարեւորը ոչ թե երկրաշարժերի քանակն է, այլ դրանց ուժգնությունը, երկրակեղեւից դուրս եկող էներգիայի չափը: Երեւանում նորակառույց շենքերի սեյսմակայունություն հիմնականում չի իրականացվում: Սովետական շրջանում կառուցվում էին 7 բալանոց երկրաշարժի ամրության, իսկ այժմ հաշվարկվել է, որ 9 բալին համարժեք պետք է լինի շենքերի սեյսմակայունությունը, որը ոչ բոլոր շինություններում է պահպանվում: Սա շատ ցավոտ խնդիր է, եւ մենք այն բարձրացրել ենք ղեկավարության մոտ ու ներկայացրել ընդունված չափորոշիչները, ու նաեւ թե ինչպիսի ամրացնող աշխատանքներ պետք է կատարվեն: Ես բավարարված չեմ ներկա իրավիճակով», նշեց պրն Անտոնյանը:

Նա նշեց նաեւ, որ ատոմակայանը գտնվում է բավականաչափ սեյսմակայուն տարածքում եւ պակաս վտանգավոր է նաեւ նոր կառուցվող ատոմակայանի տարածքը` ըստ մասնագետների հաշվարկների: Ե՛վ Հայաստանում, և՛ ամբողջ աշխարհում սեյսմիկությունը մեծացել է ու իրազեկումը դարձել է օրախնդիր կարեւոր հարց: Այժմ արդեն միջազգային կազմակերպությունների հետ բազմաթիվ ծրագրեր ու միջոցառումներ են անցկացնում թե՛ իրազեկման, թե՛ մասնագետների վերապատրաստման, եւ թե՛ վտանգը մեղմելու ուղղությունների շուրջը, տեղեկացրեց պրն Անտոնյանը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ




## Վաճառվում է

բնակարան/օֆիսային տարածք Օպերայի հարեւանությամբ: Սայաթ-Նովա 3, 1 հարկ, 62 քմ, 4.4 մ բարձ: Ունի 2 մուտք` 1-ը փողոցից: Գինը պայմանագրային: Հեռ.` **094-366-989, 055-09-64-61:**

Ռիելթոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն իրականացնելու է «Առէկսիմբանկ- Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի կողմից օտարման ներկայացված ստորեւ նշված գույքի աճուրդային վաճառքը`

- Բնակարան: Հասցե` ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Բաբաջանյան փ., շ.65, բն. 20: Մեկնարկային գինը` 15400000 դրամ:

Աճուրդի փուլերը` դասական եւ հոլանդական (գնի նվազեցում) եղանակով 15.03.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. օր ժ.13.00-ից «Ադամանդ» ԵԱՀ Բորսայի հարթակում`ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել` 56-52-28, 56-31-15 կամ այցելել **www.borsa.am** կայքը:

**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 11.02.2010 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 381.41 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 524.44 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 12.66 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 222.85 |

www. azg.am

## Ջիվան Գասպարյանի անվան դուդուկահարների միջազգային առաջին մրցույթ

(հունվար-հոկտեմբեր 2010թ, Երեւան)

Մրցույթը նվիրվում է Ռուսաստանի հայերի միության 10-ամյա հոբելյանին

**Հիմնադիրներ`**

- «Համաշխարհային հայկական կոնգրես» - հայկական հասարակական կազմակերպությունների միջազգային միություն
- «Ռուսաստանի հայերի միություն» - համառուսաստանյան հասարակական կազմակերպություն

**Կազմակերպիչներ`**

- Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության հայաստանյան մասնաճյուղ
- Հայաստանի Երաժշտական Ընկերություն

Մրցույթը անց է կացվում ՀՀ Մշակույթի Նախարարության եւ ՀՀ Սփյուռքի Նախարարության հետ համատեղ

**Մրցույթի նպատակը եւ խնդիրները**

- երաժշտակրթական եւ երաժշտալուսավորչական գործունեության ակտիվացման միջոցով նպաստել դուդուկահարների կատարողական վարպետության բարձրացման, դուդուկի, որպես հայկական ժողովրդական նվագարանի հետ առնչվող ազգային երաժշտական լավագույն ավանդույթների պահպանման ու զարգացման գործընթացներին.
- պրոպագանդել դուդուկի ազգային դպրոցի նվաճումները.
- ի հայտ բերել, աջակցել եւ խրախուսել շնորհաշատ եւ օժտված երիտասարդներին.
- կազմակերպել երիտասարդ դուդուկահարների պատրաստման բնագավառում մանկավարժական լավագույն փորձի փոխանակում եւ պրոպագանդում:

**Մրցույթի անցկացման պայմանները.**

Մրցույթին հրավիրվում են մասնակցելու պատանի եւ երիտասարդ դուդուկահարներ` Հայաստանից, Արցախից, հեռավոր եւ մերձավոր Սփյուռքից: Մրցույթն անց է կացվում երկու տարիքային խմբերով`

- պատանի դուդուկահարներ` մինչեւ 17 տարեկան ներառյալ
- երիտասարդ դուդուկահարներ`18-ից մինչեւ 30 տարեկան ներառյալ

Մրցույթը անց է կացվում երկու փուլերով:

**Մրցույթի ծրագիրը**

Մրցույթի մասնակիցները պետք է յուրաքանչյուր փուլի համար ներկայացնեն `

- Առաջին փուլ` երկու ստեղծագործություն
  - հայկական ժողովրդական մեղեդի,
  - գուսանական կամ աշուղական երգ (մասնակցի ցանկությամբ):
- Երկրորդ փուլ` երեք ստեղծագործություն`
  - Կոմիտաս կամ հոգեւոր մեղեդի (պարտադիր),
  - ժողովրդական պարեղանակ եւ աշուղական երգ (մասնակցի ցանկությամբ):
- Մրցույթի մասնակիցը ինքն է ապահովում նվագակցողներին:
- Մրցույթի փուլերի ծրագրերը չեն կարող փոփոխվել, իսկ ներկայացվող ստեղծագործությունների կրկնությունը մրցույթի փուլերում արգելվում է:
- Մասնակիցները իրենք են հոգում իրենց ճանապարհածախսն ու կեցության հետ կապված ծախսերը:
- Ամեն փուլից առաջ մրցույթի մասնակցին տրվում է մեկ փորձի հնարավորություն
- Մրցույթի ժյուրիի որոշումները վերջնական են եւ փոփոխման ենթակա չեն

**Մրցույթի անցկացման ժամկետները**

Մրցույթի առաջին փուլն անց է կացվելու Երեւանում 2010 թվականի հոկտեմբերի 8, 9, 10-ին, երկրորդ փուլը` հոկտեմբերի 13, 14 -ին (փուլի անցկացման տեղը կհայտարարվի լրացուցիչ):

Դափնեկիրների գալա-համերգը եւ մրցանակների հանձնումը տեղի կունենա Արամ Խաչատրյանի անվան համերգային մեծ դահլիճում 2010թ. Հոկտեմբերի 16 -ին:

**Մրցույթի հայտերի ներկայացման կարգը**

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը.

- Ծննդյան վկայականի կամ անձնագրի պատճենը,
- Երկու գունավոր լուսանկար (3 x 4 չափի),
- Մրցույթին ներկայացվող ծրագիրը (տպած համակարգչով),

**Մրցույթի մասնակցության հայտը**

Մրցույթի մասնակցության դիմումները ընդունվում են մինչեւ 2010թ. սեպտեմբեր 25-ը`

**Հայաստանի Երաժշտական Ընկերություն**
**հասցեն`Երեւան, Սայաթ-Նովա 15**
***հեռ. (374-10) 58-04-23, 58-95-71***
**Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության հայաստանյան մասնաճյուղ**
**հասցե` Երեւան, Տերյան 69**
***հեռ. (374-10) 51-04-40, (374-10) 51-04-42***

**Մրցույթի հաղթողների պարգեւատրման կարգը**

Մրցույթի հաղթողների համար սահմանված են հետեւյալ մրցանակները.

Պատանի դուդուկահարների խումբ`

- առաջին մրցանակ` մեկ հատ դափնեկրի դիպլոմ եւ դրամական պարգեւ 300000 դրամ
- երկրորդ մրցանակ`երկու հատ դափնեկրի դիպլոմ եւ դրամական պարգեւ 200000-ական դրամ
- երրորդ մրցանակ`երկու հատ դափնեկրի դիպլոմ եւ դրամական պարգեւ 150000-ական դրամ

Ավագ դուդուկահարների խումբ`

- առաջին մրցանակ` մեկ հատ դափնեկրի դիպլոմ եւ դրամական պարգեւ 500000 դրամ
- երկրորդ մրցանակ`երկու հատ դափնեկրի դիպլոմ եւ դրամական պարգեւ 250000-ական դրամ
- երրորդ մրցանակ`երկու հատ դափնեկրի դիպլոմ եւ դրամական պարգեւ 200000-ական դրամ

Յուրաքանչյուր տարիքային խմբում երկուական խրախուսական մրցանակ 100000 դրամ

Ամենափոքր մասնակցի համար սահմանվում է Հույսի մրցանակ

Կարող են լինել խրախուսական մրցանակներ տարբեր կազմակերպությունների եւ անձանց կողմից:

Ժյուրին վերապահված է որեւէ մրցանակ չշնորհելու ինչպես նաեւ ձայների մեծամասնությամբ մրցանակը կիսելու իրավասություն:

Մրցանակների եւ պատվոգրերի հանձնումը կկայանա մրցույթի փակման հանդիսավոր արարողության ժամանակ:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 11.21.2010, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: